Azg
Ազգ
15 ՅՈՒԼԻՍ 2004 ՀԻՆԳՇԱԲԹԻ 130 (3061)

Իգոր Իվանովը չի պատրաստվում հատուկ առաքելությամբ ուղեւորվել Ցխինվալ

ՄՈՍԿՎԱ, 14 ՅՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանի Անվտանգության խորհրդի քարտուղար Իգոր Իվանովը չի պատրաստվում հատուկ առաքելությամբ ուղեւորվել Ցխինվալ: Ի պատասխան լրագրողների այն հարցին, թե նա մտադիր չէ՞ արդյոք նույնքիսի առաքելություն կատարել Ցխինվալում, որքիսին նա արել էր Աջարիայի իրադարձությունների ժամանակ, Իգոր Իվանովը պատասխանել է. «Ցխինվալն օդանավակայան չունի հատուկ չվերթ ընդունելու համար»: Բացի այդ, ՌԴ Անվտանգության խորհրդի քարտուղարի կարծիքով, «ավելի լավ կլիներ, որ հատուկ առաքելություններ քիչ լինեին»:

Ինչ վերաբերում է սովորական այցին, ապա, ինչպես ասել է Իվանովը, ինքը պատրաստ է կատարել՝ հենց որ հրավեր ստացվի:

2004 թվականի մայիսին Ռուսաստանի Անվտանգության խորհրդի քարտուղար Իգոր Իվանովը ժամանել էր Աջարիա եւ օժանդակել Բաքուից ինքնավարության ղեկավար Ասլան Աբաշիձեի մեկնելուն:

Անրի Ժակոլեն. «Ո՞վ է իրեն սպառել՝ ԵԱՀԿ-ն, թե՞ Հայաստանը, կամ միգուցե Ադրբեջա՞նը»

Ղարաբաղյան խնդրի կարգավորված չլինելը չի խանգարում ԱՄՆ-ի տարածաշրջանային էներգետիկ ծրագրերին, ասում է Սթիվեն Մանը

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ԵԱՀԿ Մինսկի խումբը երեկ վերադարձավ Ստեփանակերտից: Արդեն Երեւանում տված մամուլի ասուլիսում ֆրանսիացի համանախագահ Անրի Ժակոլենը հայտարարեց. «Ես հարցն այլ կերպ կձեւակերպեմ. ո՞վ է իրեն սպառել, ԵԱՀԿ-ն, թե՞ Հայաստանը, կամ միգուցե Ադրբեջանը: Ես ուղղակի կասեմ, որ այս երկու երկրները չեն օգտվում այն աջակցությունից, որ ցուցաբերում է ԵԱՀԿ-ն խնդրի կարգավորման հարցում»: Ժակոլենը նման նյարդային եւ ոչ այնքան դիվանագիտական պատասխան տվեց լրագրողներից մեկի հարցին՝ «Հայաստանում որոշ ուժեր եւ Ադրբեջանի նախագահը կարծում են, թե Մինսկի խումբն իրեն սպառել է եւ կարգավորման համար նոր ձեւաչափ պետք է գտնել»:

Ամերիկացի համանախագահող, Հայաստանում ԱՄՆ առաջին հավատարմատար Սթիվեն Մանն այն հարցին, թե արդյոք համանախագահները պարզե՞լ են իրենց համար՝ բանակցային հեռագա գործընթացը շարունակվելո՞ւ է նախկինում ձեռք բերված (նկատի էր առնվում Ռոբերտ Քոչարյանի եւ Հեյդար Ալիեւի փարիզ-ֆիվեսթյան համաձայնությունները-խմբ.) հիմքի վրա, պատասխանեց. «Շատ կարեւոր է, որ ճիշտ հեռանկարով դիտարկվի: Մինսկի խմբի այս փուլի քննարկումներն ընդամենը մի քանի ամիս առաջ են սկսվել: Արդեն Ադրբեջանում նոր արտգործնախարար է նշանակվել, Ադրբեջանի նախագահը պաշտոնում ընդամենը 9 ամիս է: Ուղղակի ճիշտ չէ այն մոտեցումը, երբ նայենք ժամացույցին եւ ասենք՝ լուծում կա թե չկա»:

Տես էջ 3

ՀԱՐՑԱԽՈՒՅԶ

Հարցման մասնակիցների զգալի մասն անորոշ վերաբերմունք է արտահայտել այն ամենի հանդեպ, ինչ կատարվում է իր բնակարանի շուրջը

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

«Ազգ» օրաթերթի կողմից մայրաքաղաքի Կենտրոն, Արաբկիր, Նոր Նորք, Մալաթիա-Սեբաստիա համայնքներում անցկացված հեռախոսային սոցիոլոգիական հարցման կարեւոր բաղադրիչը բնակիչների վերաբերմունքի հետազոտումն է սոցիալական այնպիսի կարեւոր խնդրում, ինչպիսիք են բազմաբնակարան շենքերի բակային տարածքները: Ինչպե՞ս են վերաբերվում մեր քաղաքացիներն այն երեւույթին, որ շենքերի բակերը հատկացվում են առանձին անհատների եւ այնտեղ կառուցվում են ինչ-որ օբյեկտներ: 500 հարցվածներից հարցմանը մասնակցել է 423 մարդ: Հարցվածների գերակշիռ մասը՝ 290 մարդ դեմ է արտահայտվել, 34-ը կողմ է, առանց մասնավորեցնելու իր դիրքորոշման պատճառը, 37 քաղաքացի կողմ է, եթե բնակիչներին չեն խանգարում այդ հատկացումները, 34-ը որեւէ վերաբերմունք չի արտահայտում, 17-ը դժվարացել է պատասխանել, 12 մարդ թեական վերաբերմունք է արտահայտել՝ 9 հոգի ավելի շուտ կողմ է, քան դեմ, 3-ն ավելի շատ դեմ է, քան կողմ, 3-ը հրաժարվել է պատասխանել: Նկատենք, որ հարցվածների ակտիվ զանգվածը Կենտրոն (127 մարդ կամ 30,0 տոկոս) եւ Արաբկիր (140 մարդ կամ 33,1 տոկոս) համայնքներից են, այսինքն Երեւանի այն թաղամասերից, որտեղ վերջին 15 տարիների սոցիալ-տնտեսական փոփոխությունները առավել ընդգծված արտահայտվեցին:



Տես էջ 2

Վրաց-ամերիկյան խորհրդակցություններ ռազմական հարցերով

ԹԲԻԼԻՍԻ, 14 ՅՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Երեքշաբթի Գոնդաուրի բարձրլեռնային առողջավայրում ավարտվել են ռազմական հարցերին նվիրված վրաց-ամերիկյան երկօրյա խորհրդակցությունները: Ամերիկյան մեծաթիվ պատվիրակության կազմում էին ԱՄՆ պաշտպանության նախարարի տեղակալ Ջեյմս Մակ-Դուգալը եւ Պենտագոնի ղեկավարի խորհրդական Օթար Շալիկաշվիլին: Ինչպես «Նովոստի» գործակալությանը հայտնել են Վրաստանի պաշտպանության նախարարությունում, մասնակիցները քննարկել են վրաց-ամերիկյան ռազմական համագործակցության խորացման, Վրաստանի զինված ուժերին ռազմական օգնության ցուցաբերման, ըստ ԱՄՆ-ի ստանդարտների պաշտպանական համակարգի կատարելագործման եւ ազգային անվտանգության ապահովման հարցեր: Կողմերը քննարկել են նաեւ ՆԱՏՕ-ի հակահաբեկչական եւ խաղաղարարական գործողություններին վրացի զինծառայողների մասնակցության հարցը:

Իրանի նոր դեսպանը հանձնեց հավատարմագրերը

Նախագահ Ռոբերտ Քոչարյանին իր հավատարմագրերն է հանձնել Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ալի Ռեզա Հաղիղյանը:

Դեսպանը Ռոբերտ Քոչարյանին հաղորդել է Իրանի նախագահ Մոհամմադ Խաթամիի ջերմ ողջույնները: Նա ասել է, որ Իրանը բարձր է գնահատում Հայաստանի նախագահի մեծ ուշադրությունը երկկողմ հարաբերությունների նկատմամբ եւ հոխտահավետ համագործակցության զարգացման գործում առանցքային է դիտում նախագահ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնական այցը Իրան 2001թ-ին:

Ռոբերտ Քոչարյանը Իրան-Հայաստան հարաբերությունների ներկա մակարդակը բոլոր ոլորտներով գնահատել է դական եւ արտահայտվել է դրանց հետագա զարգացման օգտին: Նրա խոսքով, ակտիվ քաղաքական շփումներին զուգահեռ, տնտեսական փոխգործակցությունն այսօր արդեն թեւակոխում է որակական նոր փուլ՝ ընդգրկելով ենթակառուցվածքների զարգացումը: Իրականացման ընթացքում են խոշորամասշտաբ եւ հիմնարար մի շարք ծրագրեր:

Կողմերը երկկողմ հարաբերությունների հետագա զարգացման համար լուրջ խթան են համարել Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մոհամմադ Խաթամիի առաջիկա պաշտոնական այցը Հայաստան:

Հանդիպման ժամանակ անդրադարձ է եղել նաեւ տարածաշրջանային զարգացումներին, դարաբաղյան հիմնախնդրի կարգավորմանը: Հայաստան-Իրան հարաբերությունները դիտվել են տարածաշրջանում կայունության ու խաղաղության ապահովման կարեւոր գործոն:

Ալի Ռեզա Հաղիղյանին ընդունել է նաեւ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը:

ԵՐԵՎԱՆ

Հերթական կառուցապատումը կանաչ տարածքում

ԵՐԵՎԱՆ, 14 ՅՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Երեւանի Իսահակյան եւ Տերյան փողոցների հատման մերձակայքում՝ Արմենպրես, «Արմինֆո» եւ «Նոյյան տապան» լրատվական գործակալությունների եւ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի շենքի հարեւանությամբ գտնվող միակ կանաչ տարածքում, հուլիսի 14-ին սկսվեցին կառուցապատման աշխատանքները: Ներկայումս այդ տարածքում այսպես կոչված բացօթյա սրճարան կառուցելու համար կատարվում է ծառահատում եւ փորվում է, շինարարների խոսքերով, 4 մ խորություն ունեցող խրամատ:

Երեւանի քաղաքապետ Ռոբերտ Նազարյանի 2003թ.-ի փետրվարի 26-ի 355 ա որոշումով 580 քմ մակերեսով տարածքը տրվել է ոմն Կարեն Իսախանյանի՝ բացօթյա սրճարան կառուցելու համար: Սակայն, տարածված լուրերի համաձայն, այդ տարածքը փաստացի պետք է տնօրինի ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար Հովիկ Աբրահամյանը:

Երեւանի քաղաքապետ Երվանդ Զախարյանը բազմիցս հայտարարել է, որ իր պաշտոնավարման մեկ տարվա ընթացքում կանաչ տարածքներում հողահատկացումներ չեն արվել, իսկ այն տարածքներում, որտեղ կիսակառույցներ են, վերանայվում են դրանց նախագծերը: Սակայն քաղաքապետը որեւէ կերպ չի միջամտում՝ կանաչ տարածքում նոր կառուցապատումը դադարեցնելու համար:

Ի դեպ, տարածքի տրամադրման պայմանների վերաբերյալ տեղեկություններ ստանալու խնդրանքով հունիսի 19-ին գրավոր դիմել էինք Երեւանի քաղաքապետ Երվանդ Զախարյանին: Թեեւ ՀՀ «Քաղաքացիների դիմումների, բողոքների եւ առաջարկությունների մասին» օրենքով սահմանված ժամկետը անցել է, մինչ օրս քաղաքապետարանից որեւէ պատասխան չի ստացվել:

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հայաստանում դատարանները դեր չունեն

Հավատացած են փաստաբանները

Մամուլի ազգային ակումբում երեկ հրատարակություն էին ստացել ապրիլի 12-ին հաջորդած իրական գործերն ու դրանց քաղաքական գնահատականը, որ ներկայացրին մեղադրյալների դատապաշտպանները, Վիկտոր Դալլաքյանը եւ Ռուզան Խաչատրյանը:

Ապրիլի 12-ի լույս 13-ի գիշերը ոստիկանին ոլաստիկե դատարկ շշով հարված հասցրած Էդգար Առաքելյանի, թմրամիջոց ոգեւորելու մեջ մեղադրվող Լավրենտի Կիրակոսյանի ու Արտաշատի ոստիկանության բաժանմունքում դաժան ծեծի ենթարկված Գրիշա Վիրաբյանի դատապաշտպանները միաբերան հավաստեցին, որ դատական գործընթացը չափազանց անարդար է եւ իրականացվում է նախապես մշակված սցենարով: Էդգար Առաքելյանի դատապաշտպան Թադեւոս Ալեքսանյանը տեղեկացրեց, որ վճռաբեկում էլ փորձելու է ապացուցել, որ Էդգարը դատապարտվել է ոստիկանության գործողությունների հետեւանքի համար: Եվ գուցե վերաքննիչում նկատեն վճռաբեկի թույլ տված ակնհայտ խախտումները: Գրիշա Վիրաբյանի դատապաշտպան Սեդա Սաֆարյանն էլ հավաստեց, որ իր պաշտպանյալի դեմ հարուցված գործը քննվում է անթույլատրելիության աստիճան միակողմանի, եւ ծեծն իրականացնողների հանդեպ ոչ միայն իրական գործ չի հարուցվել, այլեւ նրանք շարունակում են ծառայությունը: Լավրենտի Կիրակոսյանի հանդեպ կատարածը՝ սկսած Ազատության հրապարակից ոստիկանություն տանելուց, տունը խուզարկելուց մինչեւ դատավճիռ կայացնելը, փաստաբան Վարդան Զուտնաչյանի խոսքերով, իրականացվել է խորհրդային եւ իրավապաշտպան մարմինների հենց 1937-ին գործադրած վաթսարագույն մեթոդներով: Զուտնաչյանը հավաստիացրեց, որ դատարանները Հայաստանում որեւէ դեր չունեն քաղաքական կտրվածքի գործերում, եւ որ նրանք ընդամենը կամակատարներ են, ովքեր թե՛ նախաքննության, թե՛ դատաքննության ընթացքում կես առ կես իրականացնում են որոշակի երանգներ:

Վարդան Զուտնաչյանը մատնանշեց խոսուն ապացույց ներկայացնել դատարանների անզորության մասին: Իսկ ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի անգործունակությունը փաստեց Ռուզան Խաչատրյանը՝ վկայակոչելով դատախազություն ուղղած հարձակման ենթարկված երեք կուսակցությունների մի քանի նամակների մինչ օրս անպատասխան մնալը եւ վստահությունը, որ նույն ճակատագրին է արժանանալու ՀՀ գլխավոր դատախազի անգործության առնչությամբ ՀԺԿ-ի դիմումը:

Վիկտոր Դալլաքյանն էլ գտնում է, որ 2003-ի նախագահական ընտրությունների անօրինությունների պատճառներն ենք հավաքում եւ անօրինական ռեժիմը իշխանությունը պահելու համար քաղաքական խնդիրները լուծում է բռնական հարթությունում ու եթե հանկարծ վերադառնա իրավական հարթություն, ապա ընդդիմությունը պատրաստ կլինի քննարկելու խորհրդարան վերադառնալու հարցը: Իսկ առայժմ, Դալլաքյանի հավաստմամբ, «Վստահության հանրաքվեի» մասին օրինագծի հետաձգման ընթացքում հաշվի չեն առնվել ԱԺ կանոնակարգի համապատասխան բոլոր դրույթները, եւ օրինագիծն ինքնաբերաբար մնում է եռօրյայի օրակարգում:

ՆԵՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հարցման մասնակիցների զգալի մասն անորոշ վերաբերմունք է արտահայտել այն ամենի հանդեպ, ինչ կատարվում է իր բնակարանի շուրջը

Սկիզբը էջ 1

Անորոշ տեսակետ արտահայտածների քանակը (ընդհանուր առմամբ՝ 99 մարդ) ուղղակիորեն հստակական ակտիվության ցածր մակարդակի ինդիկատոր կարելի է համարել: Եվ թերեւս դա է հիմնական պատճառը, որ անկախացմանն անմիջապես հաջորդած ժամանակաշրջանում քաղաքային բակերը արագ վերածվեցին կամայական, ապօրինի կառուցապատումների խճանկարի: Եվ շատ իրողությունների հետ բակերն էլ դարձան միայն խորհրդային տարիների բարի հիշողություն: Խաղահրապարակներով ու հանգստի փոքրիկ անկյուններով բակեր այսօր մայրաքաղաքում բառացիորեն մատների վրա կարելի է հաշվել: Դրանք պատած են ավտոնակների խիտ ցանցով եւ առեւտրային մանր ու մեծ օբյեկտներով՝ բնակչության առավել ճարպիկ, օրինախախտության հակված զանգվածի համար դառնալով անձնական շահերի բավարարման համար միջոց: Իհարկե, այն, ինչ ներկայացնում են այսօր Երեւանի բակերը, չէր լինի, եթե բարենպաստ հանգամանքներ չդառնային նաեւ տեղական իշխանությունների թողտվությունն ու կասկածելի հանդուրժողականությունը: Ճաշից հետո մանանեխ մատուցելու տրամաբանությամբ, այսօր քաղաքապետարանը ուշացումով փորձում է շտկել ժամանակին թույլ տված սխալները:

Այժմ բակերը հայտնվել են համայնքային տեղական կառույցների ուշադրության կենտրոնում: Ուշացած ծրագրերն ու ձեռնարկումները, որ պտտվում են բակերի շուրջը, մեր դիտարկմամբ, անկասկած ավելի են խճճելու դրությունը: Գրեթե նույնությամբ կրկնվում է այն սցենարը, ինչ աններելի շատողականությամբ կիրառվեց բնակարանային ֆոնդի նկատմամբ: Մոտ 10 տարի առաջ բազմաբնակարան շենքերի ճակատագիրը հանձնվեց համաշխարհային տնօրինությանը: Հիշեցնեմ, որ վերջիններիս գոյատեւման գլխավոր պայմանը բնակիչներից հավաքագրված գումարներն են, որոնց օգնությամբ այս կառույցները կոչված են իրականացնելու շենքերի մուտքերի ու տանիքների պահպանման, վերելակների նորոգման, ինժեներական հաղորդակցման, ներքին գծերի շահագործման եւ, որ առավել անհավանական է, ընթացիկ ու կապիտալ նորոգումների խնդիրները:

ՀՀ էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանի խոստովանությամբ, զուտ տեսական հաշվարկներով, հանրապետության 10 հազար բազմաբնակարան շենքերը խելքի բերելու համար 22 մլրդ դրամ է անհրաժեշտ: Բայց պետությունը մտադիր չէ որեւէ միջոց ձեռնարկել բնակֆոնդը փրկելու համար, որովհետեւ այն համարում է բնակչության ու համաշխարհությունների սեփականությունը: Գերակշիռ մասով անվճարունակ բնակիչներին համախմբող համաշխարհությունների ուժերից վեր է նման ծանր ու հավակնոտ առաքելությունը: Եվ այսօր տարիներ անուշադրության մատնված բազմաբնակարանները հայտնվել են ծայր քայքայման շեմին: Այն, ինչ խաղացվեց բնակֆոնդի գլխին, այսօր փոխանցվում է նաեւ բակերին: Այս տարվանից լուծարվել են բոլոր բնակշահագործման գրասենյակները, եւ շենքերը, այժմ արդեն եւ բակերը, հանձնվում են չկայացած ու իրենց գոյությունը այդպես էլ արդարացնելու անկարող համաշխարհությունների տնօրինությանը:

Թաղային համայնքներում իրականացվելու են բակերի կանաչապատման, բարեկարգման, խաղահրապարակների կառուցման, լուսավորության աշխատանքներ: Ըստ նոր ծրագրերի, նախորդ մշակված ճարտարապետական նախագծերի հիման վրա բակային տարածքները եւս ամբողջությամբ տրամադրվելու են համաշխարհություններին: Նախագծային հիմնական պայմանը լինելու է կանաչ գոտիների ու խաղահրապարակների կառուցումը: Քաղաքապետարանի այս նոր միջոցառման մեջ անհավանական շատ բան կա: Որտե՞ղ են կառուցվելու խաղահրապարակները կամ նոր կանաչ գոտիները որտե՞ղ են հիմնվելու, եթե երեւանյան բակերը բերնեբերան հագեցած են ավտոնակներով: Արդյոնշաժվելո՞ւ են այդ ավտոնակները. հավանաբար նույն տրամաբանությամբ ու գործողության սկզբունքով, ինչ կիրառվեց նախագծային չափանիշները խախտած ապօրինի կառույցների նկատմամբ: Նույնկերպ նաեւ մանր ու մեծ վաճառակետերին ոչինչ չի սպառնա: Ոչինչ չի ձեռնարկվի նաեւ այն պատճառով, որ այս իրողությունները զանգվածային բնույթ են կրում: Եթե այդպես է, ապա նոր խաղահրապարակների ու կանաչ գոտիների մասին խոսելն ավելորդ է: Առավել եւս եթե իրականացվելու են համաշխարհության ուժերով: Հնարավոր է միայն դեռեւս ազատ մնացած անկյուններում նոր խանութ կամ կրպակ հիմնել: Դա էլ համաշխարհության անդամի հովանու տակ իրականություն կդարձնեն հին սցենարի նոր մասնակիցները՝ շենքերի ունեւոր ներկայացուցիչները: Այսինքն, այս անգամ արդեն օրինականության հոդի տակ, կկատարվի այն, ինչ մինչ այսօր եղել է:

Բակային տարածքները ակնհայտ արտահայտություն են նաեւ այն իրողության, թե Հայաստանում ինչպես են խախտվում շարքային բնակչի տարրական իրավունքները, իր բնակարանի շրջակայքում հանգստանալու, պարզապես բակ դուրս գալու եւ մաքուր օդ շնչելու, երեխային խաղից չզրկելու իրավունքը: Բակային տարածքները մաս-մաս հոշոտվել ու բաժան-բաժան են արվել նույնկերպ, ինչ քաղաքի կանաչ գոտիները: Եվ պատճառը ոչ այնքան ձեռնհաս բնակչի ճարպկությունն է, որքան նրա հարեւանների՝ իրենց տարրական իրավունքները պաշտպանելու ցանկության բացակայությունը: Ապացույցը նաեւ «Ազգի» նախաձեռնած այս սոցիոլոգիական հարցումն է, որի տվյալներով, հարցվածների զգալի մասն անտարբեր կամ անորոշ վերաբերմունք է արտահայտում այն ամենի հանդեպ, ինչ կատարվում է իր բնակարանի շուրջը:

ՄՈՍԿՎԱ

Հանդիպում ՌԴ Դաշնային ժողովում

Հուլիսի 14-ի կեսօրին ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի գլխավորած պատվիրակությունը հանդիպեց ՌԴ Դաշնային ժողովի դաշնային խորհրդի նախագահ Սերգեյ Միրոնովի հետ: Հանդիպմանը քննարկվել են երկու երկրների համագործակցության վերաբերյալ խնդիրներ, մասնավորապես «Հյուսիս-հարավ» տրանսպորտային հանգույցին միանալու շուրջ է ընթացել երկխոսությունը: Խնդիրը քննարկվել է նաեւ ՌԴ վարչապետ Միխայիլ Ֆրադկովի հետ: Հավանաբար տարեվերջին կամ եկող տարեսկզբին ռուսական կողմը կհստակեցնի իր դիրքորոշումը: Անդրանիկ Մարգարյանն անդրադարձել է նաեւ երկու երկրների առանձին շրջանների միջեւ գոյություն ունեցող կապերին, որոնք վերջին տարիներին մնացել են թղթի վրա: Կողմերը փաստել են, որ եկել է գործի անցնելու ժամանակը:

Սերգեյ Միրոնովը տեղեկացրեց, որ երեք ամիս հետո աշխատանքային այցով կժամանի Հայաստան:

Այցելություն «Հայաստան» տաղավար

ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի գլխավորած պատվիրակությունը Հայաստանում Ռուսաստանի դեսպան Անատոլի Դյուկովի եւ ՌԴ-ում Հայաստանի դեսպան Արմեն Սմբատյանի ուղեկցությամբ պատշգամբային այցի շրջանակներում այցելեց Համառուսաստանյան ցուցահանդեսային կենտրոն (ՀՑԿ) եւ դիտեց «Հայաստան» տաղավարը: 2003 թ. ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի պատշգամբային այցի ընթացքում բացվեց Հայաստանի տաղավարը՝ հիմք ունենալով ՌԴ կառավարության որոշումը: Այսօր արդեն մեր տաղավարը զբաղեցնում է 2600 քմ տարածք, որից 1800 քմ օգտագործվում է հայ բիզնեսմենների արտադրանքի ցուցադրության համար: Միաժամանակ կառուցվում են նոր ցուցատեղեր Հայաստանի թեթեւ արդյունաբերության արտադրանքի նմուշները ներկայացնելու համար: Այսօր հայկական տաղավարում ներկայացված են 24 հայկական ընկերություններ, եւ վերջին 10 ամիսներին տաղավարը իրացրել է մոտ 4 մլն ԱՄՆ դոլարի հայկական արտադրանք: Հայկական տաղավար ունենալու գաղափարը հետապնդում է մի նպատակ՝ օգնել Հայաստանի ձեռնարկություններին, մտնելու ընդարձակ ռուսական շուկա եւ ձեւավորել հայկական որակյալ արտադրանքի համբավ: Երկու երկրների վարչապետների բանակցությունների ընթացքում ՌԴ վարչապետ Միխայիլ Ֆրադկովը խոստացավ «Հայաստան» տաղավարի վարձակալության գումարները չավելացնել եւ ժամկետը երկարաձգել:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐՏԱՐՅԱՆ

Մոսկվա

Գերմանական վարկային երաշխիք հայկական բանկին

Գերմանական KfW բանկի եւ «Հայէկոնոմբանկի» միջեւ երեկ կնքվեց վարկային երաշխիքի պայմանագիր: Այդ պայմանագրի շնորհիվ հայկական բանկը հնարավորություն է ստանում վարկային միջոցներ ներգրավել միջազգային բանկերից, որոնց համար վարկային երաշխիքներ կտրամադրի KfW-ն: Տրամադրվող երաշխիքի գումարը կկազմի 2,5 մլն դոլար:

Ինչպես տեղեկացրեց Հայաստանում գերմանական բանկի ներկայացուցիչ Կարստեն Գետրգյանը, բանկերի ընտրությունը սկսվել էր դեռեւս անցյալ տարվա նոյեմբերից: Այն ընթացավ երկու փուլով: Վարկային երաշխիք տրամադրելու նպատակով նախ ընտրվեց 5 բանկ, որոնցից այնուհետեւ նախապատվությունը տրվեց 3-ին: Դրանք են «Հայէկոնոմբանկը», «Հայգյուտփոխօգնության» (ACBA) բանկը եւ «Անելիք» բանկը: Միջոցները տրամադրվում են մինչեւ 10 տարի ժամկետով: Այսինքն, դրանք երկարաժամկետ վարկավորման հնարավորություն են ստեղծում: Ըստ KfW-ի ներկայացուցչի, հայկական բանկերին տրամադրվող ընդհանուր գումարը կկազմի 6,5 մլն դոլար: Գումարի հավասարաչափ տեղաբաշխում նախատեսված չէ, բայց գերմանական կողմը ձգտելու է հնարավորինս արագացնել նման բաշխումը:

«Հայէկոնոմբանկի» վարչության նախագահ Ատոմ Օսիպյանը նշեց, որ ներկայումս բանակցություններ են վարվում երկու գերմանական, մեկ հոլանդական եւ մեկ ավստրիական բանկերի հետ միջոցներ ներգրավելու նպատակով: Նրա հավաստմամբ, մեկ-երկու ամսից այդ բանակցությունները կավարտվեն: Ներգրավվող միջոցները կներդրվեն արդյունաբերության, շինարարության, առեւտրի եւ սպասարկումների ոլորտներում: Վարկերի տոկոսադրույքները կլինեն ցածր:

Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 08 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լուսանկարների սենյակ / հեռ. 581841
Հաճախորդ. ծառայություն / հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայություն / հեռ. 529353
Հաճախորդային շարասենյակ «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

ԸՆԹԱՑԻԿ

Արկադի Ղուկասյանը լավ է տիրապետում իրավիճակին

Նշել են համանախագահները Ստեփանակերտում

Հոկտեմբերի 13-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները ժամանեցին Ստեփանակերտ: Վեց ամսվա ընդմիջումից հետո այս մի այցը հազիվ թե հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ նոր քայլ էր ենթադրում: Այդուհանդերձ, այս մի այցի նորությունն այն էր, որ առաջին անգամ համանախագահները հանդիպեցին նաեւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Լրագրողների հետ հարց ու պասասխանի ժամանակ համանախագահները ի պասասխան տրված հարցի՝ թե Մինսկի խումբը ինչպես է վերաբերվում եվրոպական դիտման վերաբերյալ երեկոյան տեղի ունեցած մամուլի ասուլիսում արտահայտվելով, համանախագահները գոհունակություն հայտնեցին՝ նշելով, որ Արկադի Ղուկասյանը լավ է տիրապետում իրավիճակին, եւ նրա հետ քննարկումները բավական օգտակար էին:

Լրագրողների հետ հարց ու պասասխանի ժամանակ համանախագահները ի պասասխան տրված հարցի՝ թե Մինսկի խումբը ինչպես է վերաբերվում եվրոպական մյուս կառույցների՝ վերջին ամիսներին դրսեւորած ակտիվությանը, նշեցին, որ Հայաստանը եւ Ադրբեջանը երեք տարի առաջ դառնալով Եվրոխորհրդի անդամ, որոշակի պարտավորություններ են սանձնել, եւ միայն այդ շրջանակներում կարելի է դիտարկել այս կառույցի հետաքրքրությունները: Իսկ Եվրամիությունը ոչ մի առանձնահատուկ առաքելություն չունի կարգավորման գործում, բացի Հայաստանին ու Ադրբեջանին օժանդակելուց, որպեսզի նրանք դուրս չմնան «Նոր հարեւաններ» ծրագրից: Ինչ մնում է ԵԱՀԿ-ին, ապա Մինսկի խումբը ստեղծվել է դրա հովանու ներքո, եւ բնական է ԵԱՀԿ-ի շահագրգռությունը:

Ամերիկացի համանախագահ Սթիվեն Մաննին ուղղված հարցը վերաբերում էր նրա համանախագահ դառնալու շարժառիթին: Վերջինս նշեց, որ թեեւ ինքը երբեւէ զբաղված է եղել Կասպիականի խնդիրներով, սակայն դա չի նշանակում, թե ԱՄՆ-ը կարգավորման համատեքստում կարեւորում է նավթային գործոնը: Համանախագահի պարզաբանմամբ, ինքը 25 տարի առաջ դիվանագիտական աշխատանք է կատարել Խորհրդային Միությունում, նաեւ Հայաստանում, եւ թերեւս իր ունեցած փորձով է բացատրվում ՄԽ-ում իրեն ընդգրկելու փաստը: Նա եւ մյուս համանախագահները նշեցին, որ գոյություն չունի ամերիկյան, ֆրանսիական կամ ռուսական հատուկ տեսակետ, իրենք գործում են միասին եւ քննարկվող բոլոր գաղափարներն էլ երեքի նույնական դիրքորոշումն են:

Հնչեց հարց բանակցություններում ղարաբաղյան կողմի մասնակցության անհրաժեշտության մասին: Ռուս համանախագահ Յուրի Մերզլյակովը նշեց, որ ԵԱՀԿ-ի որոշման մեջ կա մի կետ, ըստ որի բանակցություններին պիտի մասնակցեն հրադադարի համաձայնագիրը ստորագրածները: Այս հիմքով էլ մինչեւ 1997 թ. ԼՂ-ն մասնակցել է բանակցություններին, իսկ թե ինչու է այդտեղ Ղարաբաղը դուրս մնացել բանակցային գործընթացից, բոլորովին էլ Մինսկի խմբի մեղքը չէ:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

Արկադի Ղուկասյան. «Ո՞վ է իրեն սպառել՝ ԵԱՀԿ-ն, թե՞ Հայաստանը, կամ միգուցե Ադրբեջանը»

Սկիզբը էջ 1

Մանը նկատեց, որ խնդրի լուծումը կախված է հակամարտող կողմերի քաղաքական կամքի դրսեւորումից: «Ոչ մի արտաքին ուժ չի կարող գալ եւ կախարդական լուծում առաջարկել: Լուծման կարելի է հանգել միայն մանրամասն քննարկումների եւ փոխզիջումների միջոցով: Մենք չգիտենք, թե այդ փոխզիջումներն ու համաձայնություններն ինչպիսին կլինեն, որպիսեւ կողմերն իրենք պիտի որոշեն», ասաց նա:

Ամերիկացի համանախագահողը այն հարցին, թե ինչ-որ կերպ ղարաբաղյան հարցի չլուծված լինելը խանգարո՞ւմ է Մ. Նահանգների տարածաշրջանի էներգետիկ ծրագրերին, պատասխանեց. «Կասպյան ավազանի ամերիկյան էներգետիկ քաղաքականությունը կար Քլինթոնի եւ Բուշի ժամանակ, դրանում փոփոխություններ չեն եղել: Չնայած կովկասյան տարածաշրջանում առկա մի շարք հակամարտություններին, Բաքու-Թբիլիսի-Ջեյհանը կառուցվում է, մինչ այժմ հակամարտությունները չեն սպառադարձել, այժմ էլ չեն անդրադառնա (էներգետիկ ծրագրերին): Խողովակաշարերը կառուցում են ոչ թե կառավարությունները, այլ մասնավոր ընկերությունները: Մասնավոր ընկերությունները հաջողությամբ համագործակցել են Ադրբեջանի, Վրաստանի եւ Թուրքիայի կառավարությունների հետ եւ ձեւավորել այս («Արեւելք-արեւմուտք» էներգետիկ) միջանցքը»:

Ե՞րբ է հնարավոր Ղարաբաղի ներգրավումը բանակցություններին որպես կողմի: Տեսակետներ կան, թե իբր բանակցային գործընթացից ղարաբաղյան կողմին դուրս թողնելու պատճառով է հարցը մտել փակուղի: Այս հարցին Մանը տվեց հետեւյալ պատասխանը. «Բոլորովին էլ խելամիտ չէ ասել, որ բանակցությունները փակուղի են մտել: Խնդրի կարգավորման պատասխանատվությունը հենց կողմերին է վերաբերում: Սա նույնպես այն խնդիրներից մեկն է, որը թողնվում է, որ կողմերն իրենք որոշեն եւ հստակեցնեն»:

Ռուսաստանցի համանախագահող Յուրի Մերզլյակովը տարածաշրջան այս այցից առաջ «Ազատություն» ռադիոկայանի հետ հարցազրույցում պատասխանելով հարցին, թե կա՞ արդյոք օրակարգում Ադրբեջանին տարածքներ վերադարձնելու հարց, ասել էր. «Ես այս պահին չեմ կարող բացել բանակցությունների բովանդակությունը, սակայն Ադրբեջանի տարածքում Հայաստանի զորքերի առկայության հարցը պիտի որ քննության նյութ դառնա: Բայց մանրամասներ ես իրավունք չունեմ հրապարակելու, որովհետեւ կողմերը գաղտնիության պայմանավորվածություն են ձեռք բերել»:

«Ազգը» Մերզլյակովին հետեւյալ հարցն ուղղեց. «Դուք մի քանի օր առաջ «Ազատությանը» տված հարցազրույցում ասել էիք, որ բանակցություններում կարեւոր հարցերից մեկը պետք է ըառնա հայկական ուժերի դուրսբերումն Ադրբեջանի տարածքից: Որքանո՞վ է այդ հարցը քննարկվել այս այցի ժամանակ»: Ռուս համանախագահողը պատասխանեց. «Կոնկրետ այդ հարցազրույցը ես չեմ հիշում, բայց նման հայտարարություն չեմ արել, հավատացեք ինձ: Ինձ ճիշտ չեն հասկացել, կամ դուք չեք ճիշտ մեջբերում: Հարցն այդպես չի դրվել եւ չի քննարկվել»:

Ասուլիսից հետո Մերզլյակովից փորձեցինք ճշտել, թե, այնուամենայնիվ, ինչպե՞ս է ինքը մեկնաբանել ադրբեջանական տարածքներից հայկական ուժերի դուրսբերման հնարավորությունը: «Այն ժամանակ (նկատի ունի բանակցությունների այն փուլը, երբ Ադրբեջանում արդեն նախագահն Իլհամ Ալիեւն էր-խմբ.) ադրբեջանական կողմից նման հարց դրվում էր, դրանից հետո կողմերը կրկին հաստատեցին, որ քննարկումների մանրամասները կրելու են գաղտնապահական բնույթ: Այդ պատճառով, թե ինչ է հիմա քննարկվել, ես չեմ կարող ասել, բայց այն ժամանակ, երբ ինձ հարց տվեց «Ազատություն» ռադիոկայանի թղթակիցը, նա հարցը տվեց քանակի (նկատի ունի շրջանները-խմբ.), այլ ոչ թե փաստի մասին, այսինքն՝ քանիսի՞ց (նկատի ունի շրջանները-խմբ.): Ես կրկնում եմ, այդ մասին հստակ չի ասվի, որովհետեւ գաղտնի է եւ հետո համանախագահները ելնում են նրանից, որ այդ մասին պետք չէ խոսել, դա բանակցությունների առարկա է: Ուղղակի քննարկվել է ադրբեջանական տարածքներից հայկական ուժերի դուրս գալու հարցը: Դա գործընթացի սկզբում էր, երբ օրակարգը բաց էր եւ կողմերից յուրաքանչյուրը կարող էր քննարկման համար իր առաջարկությունն անել», ասաց Մերզլյակովը:

ՍԵՊՏԵՄԲԵՐ

Թուրքիան մտադիր չէ վերանայել Հայաստանի հանդեպ թշնամական քաղաքականությունը

Երեւանը «վետո» դնելու մտադրություն հավանաբար չուներ

Թուրքական կառավարությունը հրաժարվել է 2007 թ. ԵԱՀԿ-ում նախագահող երկիր դառնալու նախաքայլ հայտնած ցանկությունից: Պատճառնական Անկարայի այս անակնկալ քայլն ամենայն հավանականությամբ անակնկալի է բերել նաեւ հայկական դիվանագիտական շրջանակներին:

«Ազգը» չունի բավարար տեղեկություններ, թե ինչո՞ւ է Եվրամիությանն անդամակցելու հավակնություններ ունեցող Թուրքիան հրաժարվել եվրոպական մեկ այլ կառույցում՝ ԵԱՀԿ-ում նախագահող երկիր դառնալու ցանկությունից, մանավանդ որ 2007 թ. նախագահության համար Թուրքիան Վիեննա դիմած միակ երկիրն էր 55 անդամ պետություններ միավորող կազմակերպությունում:

Ըստ ամենայնի, ինչպես նկատում է «Կալիֆորնիա կուրիեր» թերթի հրատարակիչ Հարութ Սասունյանը, «ակներեւաբար Թուրքիան չի ցանկանում նվաստացած զգալ համաքխարհային հասարակության առջեւ՝ պատճառնական քվեարկության ժամանակ Հայաստանի «վետոյի» դեմքում»:

Հունիսի 14-ին Վաշինգտոնում, պետքարտուղար Քոլին Փաուելի հետ հանդիպման նախօրեին, Ռազմավարական եւ միջազգային ուսումնասիրությունների կենտրոնում Հայաստանի արտգործնախարարը հայտարարել էր, որ Երեւանն իր «վետոյի» իրավունքը կօգտագործի. «Մենք չենք կարող թույլ տալ մի երկրի նախագահությունը (ԵԱՀԿ-ում), որի հետ չունենք դիվանագիտական կապեր: Մենք չենք կարող թույլ տալ մի երկրի նախագահությունը ԵԱՀԿ-ում, որը Լեռնային Ղարաբաղի հակամարտության միջնորդն է, իսկ նախագահող (երկիրը) ունի որոշակի իրավունքներ ու արտոնություններ, որոնք կարող են օգտագործվել Հայաստանի դեմ», ասել էր Վարդան Օսկանյանը:

Անցնող շաբաթ մամուլի ասուլիսում **«Ազգի»**՝ «Անկարայի ոչ քայլերի դեմքում է Երեւանը պատրաստ հրաժարվել «վետո» դնելու իր մտադրությունից» հարցին Օսկանյանը պատասխանեց. «Դա առեւտրի առարկա դարձնելու նպատակ չունենք, դա որոշում էր կախված մի բանից՝ Թուրքիան Հայաստանի հետ չունի դիվանագիտական հարաբերություններ: ԵԱՀԿ նախագահող երկիրը պետք է կազմակերպության անդամ բոլոր պետությունների հետ ունենա դիվանագիտական հարաբերություններ»:

Թուրքական կառավարության՝ 2007 թ. ԵԱՀԿ-ում նախագահող երկիր դառնալուց հրաժարվելու որոշումը ըստ երեւույթին նշանակում է, որ Անկարան չի ցանկանում դիվանագիտական հարաբերություններ հաստատել Երեւանի հետ, վերջ տալ Հայաստանի 11 տարի շարունակվող շրջափակմանը (ինչն ագրեսիայի ձեւերից մեկն է), Ղարաբաղի հարցում շարունակելու է ադրբեջանամետ դիրքորոշումը, մի խոսքով, Թուրքիան մտադիր չէ վերանայել Հայաստանի հանդեպ որդեգրած թշնամական՝ վերջնագրերի ու նախապայմանների լեզվով խոսելու քաղաքականությունը:

Թուրքիայի՝ ԵԱՀԿ-ի նախագահությունից հրաժարվելու որոշումը Հայաստանի արտաքին քաղաքականության հաղթանակ որակելը հավանաբար ճիշտ չի լինի: Այս ամենի մեջ դրականը թերեւս այն է, որ Անկարան տեղի տվեց ոչ երրորդ կողմի ճնշումների պատճառով: Հայ-թուրքական հարաբերությունների թվացյալ կարգավորման գործընթացը վերածվել է Անկարայի վրա մի կողմից Մ. Նահանգների, մյուս կողմից՝ Եվրամիության ճնշումների արդյունավետ միջոցի:

Մյուս կողմից, արդարացվա՞ծ էր արդյոք արտգործնախարար Օսկանյանի՝ Վաշինգտոնում արած հրապարակավ հայտարարությունը, թե Հայաստանը կօգտվի «վետոյի» իր իրավունքից: Եթե իրոք Հայաստանը նպատակ չուներ գնալու մինչեւ վերջ, ապա, միեւնույն է, Երեւանը չէր, որ պիտի հայտարարեր «վետոյի» մասին, այն էլ հրապարակավ ու արտգործնախարարի մակարդակով:

Բացի այդ, եթե իրոք Երեւանը չէր ուզում Թուրքիային տեսնել ԵԱՀԿ նախագահողի պատճառնում, ապա նախապես՝ մի քանի տարի առաջ չէր հայտարարի, այլ քվեարկության օրն ուղղակի «վետո» կդներ ու կբացատրեր այդ քայլի արդարացվածությունը:

ԹԱԼԱՐՈՒՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Պատասխան թուրքական քարոզչական մեքենային

Միջազգային հարաբերությունների պատմաքաղաքագետ Ավետիս Կալաջյանը հրատարակության է պատրաստել եւ շուտով կհրատարակի իր՝ «Թուրք-թուրանական ծավալողական քաղաքությունը եւ 70 նահատակ ազգերը» գիրքը:

Ըստ նրա՝ գիրքը հայկական լոբբիինգի համար մեծ ծառայություն կարող է լինել, քանի որ ամփոփում է թուրքական ցեղախմբերի կատարած բոլոր ոճիրները:

«Այս գիրքն առայժմ հայկական ամենահզոր պատասխանն է թուրքական սուտ մեղադրանքներին», ասաց Կալաջյանը՝ նշելով վերջերս հայերին հասցեագրվող պատմական խեղաթյուրումների հանգամանքը:

Ավետիս Կալաջյանի պատմական հետազոտության արդյունքում պարզվել է, որ թուրքական ցեղախմբերի՝ Անդրկովկասում հայտնվելուց հետո ավելի քան 70 ազգ է տուժել:

«Սա մեր տարածաշրջանի գլոբալ հարցն է եւ, իմ կարծիքով, պետք է լուծվի երկրների ռազմաքաղաքական դաշինքով, ուստի իմ գրքով ես փորձում եմ այդ խնդիրն առաջ քաշել», ասաց հեղինակը:

Հեղինակը հավաստիացնում է, որ 800 էջանոց այս գիրքը բացի հայերենից լույս է տեսնելու նաեւ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն եւ արաբերեն:

ՆԱՐԻՐ ՀՈՒՍԻԿՅԱՆ
ԵՊՀ ժուռնալիստիկայի
ֆակուլտետի առաջին կուրս

«Նյու Յորք Լայֆ»

Ութ եղեռնից ուղիղ 89 տարի անց, այս տարվա հունվարի 27-ին «Նյու Յորք Լայֆ» ապահովագրական ընկերության եւ Կալիֆոռնիայի «Լա Կանադա Ֆլինտրիջ» ընկերությունից 88-ամյա Մարտին Մարության եւ 11 այլ հայցվորների փաստաբանների միջեւ ստորագրվեց կարգավորման մի համաձայնագիր, որով ավարտին հասցվեց 1999 թ. նոյեմբերին Լոս Անջելեսում «Նյու Յորք Լայֆ» ընկերության դեմ հարուցված գործը: Ընկերությունը համաձայնեց 20 մլն դոլար վճարել 1875-1915 թթ. ընթացքում Օսմանյան կայսրությունում հայերի ձեռք բերած եւ առ այսօր չվճարված 2400 ապահովագրական տոմսերի դիմաց: Հնգամյա (եւ ավելի) տեւողությամբ ճանապարհի, մամուռներով լի պայքարի մասին է Հրակ Վարդանյանի ՀԲԸՄիության «AGBU» պարբերականի ապրիլյան համարում տպագրված նյութը, որը թարգմանաբար ներկայացնում ենք մեր ընթերցողներին:

Սեմ Կադոյանը հիշում է, որ երբ 5-6 տարեկան էր, «Նյու Յորք Լայֆ» ապահովագրական ընկերության մի գործակալ Օսմանյան կայսրության խարբերդի շրջանի իրենց տուն էր այցելել ծնողներին ապահովագրելու նպատակով: Նա հաստատում է, որ ծնողները կնքել են պայմանագիր, հույս ունենալով երեխաների կյանքը ապահովել իրենց մահվան դեպքում: Ծնողները զոհվել էին 1895-ի կոտորածների ընթացքում: «Ընկերության գործակալի, որն, ի դեպ, հայ էր, մեկնելուց հետո, հայրս ինձ համբերությամբ բացատրեց, թե ինչ է նշանակում ապահովագրություն: Ես սանալու էի հազար դոլար յուրաքանչյուրի մահվան դեպքում», հիշում է հոգով առողջ ու մտքով պայծառ 96-ամյա Կադոյանը: 1915 թ. հորը կորցնելուց հետո նա մոր հետ մի կերպ հասնում է Ամերիկա եւ փորձում է «Նյու Յորք Լայֆից» փոխհատուցում սանալ: «Նյարդայնացնող գործընթաց էր, որը ոչ մի արդյունք չտվեց», հիշում է նա: Բացի մանկական հիշողությունից եւ հին մի նոթատետրում գրված վճարումներ կատարելու հաստից, նա ոչ մի փաստաթուղթ չուներ հիմնավորելու իր պահանջը: Իրականում հետագա տասնյակ հայցվորներից ոչ մեկն էլ չուներ ապահովագրական բուն պայմանագիրը, բացի մեկ ընտանիից, որը խնամքով պահպանել էր այն եւ որը օգտագործվեց խմբակային հայց ներկայացնելու համար:

Մարության: Ճանապարհի սկիզբը

«Ես պահել էի իմ մորեղբոր՝ Սեդրակ Շեյթանյանի ապահովագրական պայմանագիրը եւ դրամական մուծումների ստացականները, որոնք նա մոռս էր փոխանցել անձամբ: Մայրս եւ ավագ քույրը Ամերիկա էին եկել 1914-ին՝ իրենց հետ բերելով այդ բոլորը: 1923-ից սկսել են պահանջել իրենց իրավունքները ընկերությունից», պատմում է Մարտին Մարությանը: «Նյու Յորք Լայֆը» պնդում էր, որ իրենց մոտ արձանագրություններ չկան: Նրանք պահանջեցին մահվան վկայականներ, վստահ լինելու համար, որ մենք ենք իսկական ժառանգները: Մայրս եւ մորաքույրս Կոստանդնուպոլսի պատրիարքարան դիմեցին հավաստիացումներ ստանալու, որ խարբերդում իրոք կոտորածներ են տեղի ունեցել եւ մորեղբայրս սպանվել է: Ժամանակներն անցան եւ միայն 1956 թ. մայիսի 20-ին պատրիարքարանից պատասխան ստացվեց: Մենք այդ բոլոր փաստաթղթերը հավաքեցինք եւ ներկայացրինք ընկերությանը: Բայց սայլը տեղից չշարժվեց: Միշտ նոր հարցեր էին առաջանում»:

Բայց ի վերջո, ի մի բերելով հավաքված նյութերը, անլուծելի թվացող առեղծվածը սկսեց «տեղի տալ»: 2004 թ. հունվարի 28-ին «Նյու Յորք Լայֆը» հայտարարեց, որ համաձայն է 20 միլիոն դոլար փոխհատուցում վճարել 1875-1915 թթ. Օսմանյան կայսրությունում հայերի ձեռք բերած եւ ցարդ չվճարված 2400 ապահովագրական պայմանագրերի դիմաց:

Անցած տարիներին «Նյու Յորք Լայֆի» կենտրոնական գրասենյակ լուրեր են հասել հատկապես ընկերության փարիզյան մասնաճյուղից, որ ապահովագրական պայմանագրեր ունեցողներից շատերը մահացել են զանգվածային կոտորածների ընթացքում: Ընկերության ներկայացուցիչ Ուիլյամ Ուերֆելմանի խոսքերով, Սամբոլում մի հայ իրավաբան է զբաղվել՝ տեղեկություններ հաղելով: Պարզվել է, որ 2400 հայեր ստորագրել են նման պայմանագրեր:

Նյու Յորքում 1915 թվին ծնված Մարությանը, սակայն, դժգոհ է ընկերության գործունեությունից: «Նրանք այդքան հեռու գնալու կարիք չունեին: Մենք այստեղ էինք՝ իրենց կենտրոնական գրասենյակի շվաքի ներքո», ասում է նա: Մոր եւ մորաքրոջ մահվանից հետո, ինքն ու կինն են ստանձնել գործը շարունակելու առաքելությունը՝ իրավաբան Վարդգես Եղիայանի աջակցությամբ: «Առանձին գործելու դեպքում շատ ավելի մեծ գումար կարող էի ստանալ, բայց որոշեցինք դիմումը ձեւակերպել խմբակային, ամբողջ համայնքին օգնելու նպատակով», նշում է նա:

Մորգենթաու: Տողերի արանքում

Եթե Մարությանի փաստաթուղթը «ծուխն» էր, այդ ծուխը կրակի վերածողն անկասկած 67-ամյա իրավաբան Վարդգես Եղիայանն էր, որը հերոսական աշխատանք է կատարել 20 տարի շարունակ:

«Ամեն ինչ սկսվեց, երբ 1986-ին սկսեցի երկրորդ անգամ ընթերցել դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը: Ես հանդիպեցի մի սարսռեցնող պատմության», հիշում է Եղիայանը: Թալեաթը ամերիկացի դեսպանին խնդրում էր իրեն հանձնել ամբողջական ցուցակը այն հայերի, որոնք ամերիկյան ապահովագրական ընկերություններում պայմանագրեր էին կնքել: «Նրանք բոլորն այժմ մահացած են եւ ժառանգներ չունեն: Ոչի նրանց ունեցվածքն այժմ գործնականորեն պետությանն է պատկանում», ասել էր նա: Իսկ դեսպանն այս ամենից վրդովված, համարելով, որ Թալեաթն անցնում է ամեն սահման, վեր էր կացել եւ «Դուք ինձից ոչ մի ցուցակ էլ չեք սանա» ասելով՝ դուրս եկել սենյակից:

Եղիայանը կարդալով այս հատվածը, մտածել է. «Միգուցե արժե՞ ձեռք բերել այդ ցուցակը»: Դրան հաջորդել են վճռականության, բախտի եւ համայնքի աջակցության հրաշարձությունները: Եղիայանը գրել է այդ ժամանակվա պետքարտուղար Ջորջ Շուլցին: Մինչ հայրենակիցներից ոմանք թերահավատորեն են վերաբերվել նրա այդ քայլին, նա հաջորդ շաբաթների ընթացքում ստացել է 800-900 էջանոց փաստաթղթեր, որոնց ուսումնասիրությամբ էլ սկիզբ է դրել դատական հայցին: Փաստաթղթերում եղել են այնպիսիք, որոնք հաստատել են, որ Օսմանյան կայսրությունում «Նյու Յորք Լայֆի» գրասենյակների փակումից հետո հայերը շարունակել են մուծումներ կատարել այդ ընկերությանն ամերիկյան դեսպանատան միջոցով: Հասկանալով, որ ճիշտ ուղու վրա է, Եղիայանը հայտարարություն է տպագրել հայկական թերթերում՝ խնդրելով ապահովագրության առնչվող փաստաթղթեր ունեցողներին կապ հաստատել իր հետ: «Կարծես սխալ էր հայտարարություն անելը: Ամեն տեսակի նկարներ ուղարկեցին, ու ես մտածում էի, թե ինչի մեջ եմ խրվել, երբ հանկարծ մի կին հրավիրեց ինձ տուն՝ ասելով, որ ունի այն, ինչ որոնում եմ: Ժառանգությամբ կապված կոշիկի տուփի միջից այդ կինն ինձ տվեց ապահովագրական մի պայմանագիր», հիշում է Եղիայանը: «Ցնցված այդ կինը երկար չմտրեց եւ մահացավ նախքան դատական հայցի հարուցումը, նրա եղբայրը՝ Մարտին Մարությանն ինձ հետ շարունակեց պայքարը»:

Դոմեջյան, Փուչիկյան եւ ուրիշներ

Ուսումնասիրելով հրեական Հոլոքոսթի զոհերի նմանօրինակ գործընթացը, 1997-ին Եղիայանը նկատում է, որ անհրաժեշտ է ապահովագրական գործերի ժամկետային սահմանափակումների օրենսդրական ակտը երկարացնել, եւ դիմում է Կալիֆոռնիայի նախկին կառավարիչ Ջորջ Դոմեջյանին, որն էլ իր հերթին հանձնարարում է հանրապետական սենատոր Չարլզ Փուչիկյանին՝ զբաղվել այդ հարցով:

«Որպես վերապրողների թոռ, ինձ մեծապես հուզեց եւ հետաքրքրեց այդ խնդիրը, եւ ես ձգտեցի ինչքան հնարավոր է օգտակար լինել», պատմում է Փուչիկյանը, որի ջանքերով էլ 1998-ին ընդունված հրեականի օրինակով 2000 թ. ընդունվում է ապահովագրական պայմանագրերի գումարների պահանջատիրության ժամկետի երկարացման օրենքը, որով նախատեսվում է պահանջներ ներկայացնել մինչեւ 2010 թվը:

«Կալիֆոռնիայում ապրելու առավելությունն այն է, որ հայկական ընտրազանգվածի առկայության պայմաններում բավական հետաքրքիր է Հանրապետական եւ Դեմոկրատական կուսակցությունների ներկայացուցիչներից ստանալ նպատակավոր դիրքորոշում: Որոշ առարկություններ եղան ապահովագրական ընկերությունների կողմից, որոնք փորձեցին փոխզիջումների գնով լուծել հարցը, բայց տեսնելով, որ մենք հաստատակամ ենք, տեղի տվեցին», պատմում է Փուչիկյանը, որը բացառում է ընկերությունների ներկայացրած պատկերը, թե իբր «լավություն են անում» եւ արժանի են գովասանքի:

Հաջորդ քայլն այն էր, որ դատական լսումները կատարվեին Կալիֆոռնիայում եւ ոչ թե Լոնդոնում կամ Փարիզում, ինչպես ենթադրվում էր՝ ելնելով պայմանագրերի լեզվից: «Նյու Յորք Լայֆի» իրավաբանների բերած «ծխածածկութային» հակափաստարկների թվում նշվում էր, որ խնդիրն արտաքին քաղաքականությանն է վերաբերում եւ նահանգը իրավասու չէ որոշում կայացնելու: Դատարանը, սակայն, մեկընդմիշտ մերժեց այդ մոտեցումը, ամրագրելով, որ խնդիրը սոսկ ամերիկյան ընկերությունների եւ նրանց հաճախորդների միջեւ կայացած պայմանագրերի շուրջ է եւ արտաքին քաղաքականության հետ ոչ մի կապ չունի:

«Սա մեծ հաղթանակ էր մեզ համար», խոստովանում է Եղիայանը, քաջ գիտակցելով, որ Եվրոպայում շատ ավելի բարդ կլիներ խնդիրը լուծել:

Հաղթանակի առաջին նշույլի հետ սկսեց ավելանալ հայցվորների թիվը: Եղիայանն սիրված էր երբեմն այլ մասնագետների օգնությանը դիմել. ընդգրկվեցին հայազգի իրավաբաններ Բրայան Կաբատեկն ու Մարկ Կիրակոսը եւ Հոլոքոսթի գործերով վետերան Ուիլյամ Շեռնոֆը:

Գումարային ճշգրտումներ

Շուրջով սկսեցին դատական խմբակային գործը: Գումարային պահանջ նրանք չներկայացրին, թողնելով, որ դատարանը կայացնի իր որոշումը: Իրենց նախնական հաշվարկներով ապահովագրական ընկերությունների այդ ժամանակաշրջանի կնքած պայմանագրերի 25 տոկոսը պետք է պատկաներ հայերին: Ընկերության հայթայթած տվյալներով պարզվել է, որ 45 տոկոս է կազմում այդ թիվը: Սա խոսում է այն մասին, որ հայերը միշտ գործունյա, աշխատասեր եւ տնտեսող ազգ են եղել: Ընդհանուր պայմանագրերից մոտ 3.800-ը վաճառվել է հայերին, որից 1200-ը այդ ժամանակ մարվել է: Մոտավոր հաշվարկներով նրանք չվճարված պայմանագրերը գնահատեցին 1.200.000 դոլար (1915-ի տվյալներով): Հաջորդ հարցն այդ թիվը ներկա արժեքների տեսքով ներկայացնելն էր: Կալիֆոռնիական մի օրենքի համաձայն ապահովագրական պայմանագրերի տոկոսները չեն հաշվում մինչեւ պահանջ չներկայացվի: Ուսումնասիրվեցին Հոլոքոսթի ապահովագրական պայմանագրերի գործերը: Դրանք հաստատվել էին տասնապատիկ չափով: Վարձվեց նաեւ մի տնտեսագետ Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանից: Նա նույնպես համաձայնեց, որ 10 միլիոնը ընդունելի գումար պետք է լինի: Բայց Եղիայանը եւ իր գործընկերները չհամաձայնեցին: Նրանք զգում էին, որ ավելին կարող են ձեռք բերել, առանց ենթադատելու «Նյու Յորք Լայֆին»:

«Արդար լինելու համար պետք է ասել, 1922-ին զգալով, որ Եվրոպայից դուրս են գալիս, «Նյու Յորք Լայֆի» պատասխանատուները վերապահովագրվել են իրենցից ավելի մեծ ֆրանսիական «Լյունիոն» գործակալությունում, հանձնելով նրանց իրենց ամբողջ ռեզերվները», բացատրում է Եղիայանը, նշելով, որ այդ պատճառով էլ չեն կարող շատ պնդել տոկոսների հարցում:

Հարցը կարող էր երկար ձգձգվել: Բայց Կալիֆոռնիայի ապահովագրական հանձնակատար Ջոն Գարամենդիի միջնորդությամբ վերջնական լուծումը դարձավ տեսանելի:

Քսան միլիոնից երեք միլիոնը հատկացվելու է 6 ամերիկահայ եկեղեցական բարեգործական միություններ եւ երեք ոչ շահութաբեր կազմակերպություններ, որոնց թվում են Հայկական կրթական հիմնադրամը, Հայ օգնության միությունը եւ ՀԲԸՄ-ն: Իրավաբանների մի խումբ հսկելու է, որ բաշխումները կատարվեն արդարացի: Ընտանիքների ցուցակները տպագրվելու են երկու ամերիկյան թերթերում (USA Today եւ Wall Street Journal), հայկական պարբերականներում եւ ինտերնետային էջում՝ www.armenianinsurancesettlement.com հասցեով:

Երկար, տխրաշան ճանապարհի մինչեւ... փոխհատուցում

դոլար վճարել 1875-1915 թթ. ընթացքում Օսմանյան կայսրությունում հայերի ձեռք բերած եւ առ այսօր չվճարված 2400 ապահովագրական տոմսերի դիմաց: Հնգամյա (եւ ավելի) տեւողությամբ ճանապարհի, մամուռներով լի պայքարի մասին է Հրակ Վարդանյանի ՀԲԸՄիության «AGBU» պարբերականի ապրիլյան համարում տպագրված նյութը, որը թարգմանաբար ներկայացնում ենք մեր ընթերցողներին:

Մարդկային գործոնը

Բյուրոկրատական քաշքշուկներից ու դատական լսումներից առավել հետաքրքրական են մարդկային հարաբերությունները, որոնք ձեւավորվել են այս գործի ընթացքում:

Երբ Եղիայանն ու իր գործընկերները հայտարարության ձեւով հայկական մի թերթում ապահովագրական վկայական ունեցող 18 երգրումցիների անուն են տպագրել, մի մարդ է զանգահարել՝ ասելով, որ ազգականներից մեկը կարող է իր ազգականինը լինել: Հետո Նյու Ջերսիից մի կին է զանգահարել, հաղորդելու, որ այդ անձնավորությունը Բաղդադում ազգականներ ունի: Ավելի ուշ Ռուսաստանից եւ Վրաստանից այլ ազգականներ են հայտնաբերվել: Եվ բոլորը որոշել են այդ Նոր տարին անցկացնել միասին Փարիզում: Երբ փետրվարին Եղիայանը հետաքրքրվել է առաջին զանգողից, թե ինչո՞ւ իրենց գործերի համար դիմում չեն ներկայացնում, վերջինս պատասխանել է. «Ո՞ւմ է պետք ապահովագրական վկայականի գումարը: Մենք հարազատների մի ամբողջ ընտանիք հայտնաբերեցինք»:

Եղիայանի կարծիքով հետագայում ավելի մեծ թվով ընտանիքներ կգտնեն միմյանց: Վերադառնալով դատական հայցին, նա նշում է հպարտորեն. «Սա դեռ գործի սկիզբն է: Մենք ամբողջ համայնքն ենք ոտի հանել»: Մի գերմանացի պատմաբան՝ դոկտ. Հելմար Քայզերը, որն օգնել է «Նյու Յորք Լայֆի» գործում, նույնպես գտնում է, որ «սա առաջին գործնական քայլն է: Մի ընկերություն կարողացել է բաց ճակատով նայել իր պատմությանը: Ուրիշներն անպայման կհետեւեն նրա օրինակին: Դա նաեւ բոլոր ապահովագրական ընկերություններին ու բանկերին հասկացնում է, որ հայերը գործի մարդ են: Քայզերն ավելացրել է. «Հասարակական կարծիքը Թուրքիայում դեռ պատրաստ չէ ընդունելու ճշմարտությունը: Ժամանակ կպահանջվի մինչեւ էրդողանը քաղաքականության նոր կուրս վարի: Բայց պատմականորեն խոսելով, նա առաջին վարչապետն է, որ չի պատկանում երիտթուրքերի վարչակարգի ավանդույթներով շարժվող մի կուսակցության: Նրա ընտրազանգվածը միշտ ընդդիմադիր է եղել եւ դեռ նոր ուժգնություններ որոնելու հնարավորություն է տալիս: Ցեղասպանության 90-ամյակը լավ առիթ կարող է հանդիսանալ»:

Իսկ հայցվորներն ուրախ են, որ իրենց ներդումն ունեն այս գործում: «Երջանիկ եմ, որ դեռ ողջ ենք եւ կարողացանք որոշակի արդյունքի հասնել ոչ միայն մեզ, այլեւ մեր ծնողների եւ ընդհանրապես հայկական համայնքի համար», ասում է Մարությանը:

Պետք է հուսալ, որ այս կարգավորումը իրոք ճանապարհ կհարթի Ցեղասպանության ժամանակաշրջանի այլ ապահովագրական ընկերություններից եւս սանալու համապատասխան փոխհատուցումներ:

Պատրաստեց
ՀԱՍՈՒՆ ՕՇԱԿԱՆ

«Ալ Ղաիդան» պատրաստվում է 4-րդ սերնդի պատերազմին

Վեդ փորձագետ Մագնուս Ռաստրոմը՝ «Քաղաքական ահաբեկչության ուսումնասիրության» կենտրոնի տնօրենը, շոլանդական Սենտ Անդրուս համալսարանի համագործակցությամբ, իսլամական ահաբեկչության համաշխարհային ամենախոշոր փորձագետներից եւ սեպտեմբերի 11-ից հետո բեն Լադենի գործով CNN հեռուստատեսության գլխավոր խորհրդատուն, հետաքննություն է անցկացնում «Ալ Ղաիդան՝ կիբերտարածքում եւ ահաբեկչության մուտքը ինֆորմացիոն դարաշրջան» թեմայի վերաբերյալ: «Սա բոլորովին էլ ֆանտաստիկ սցենար չէ, որ պատրաստվում է, այլ այսպես կոչված 4-րդ սերնդի (4GW) պատերազմի ծրագիր», գրում է La Stampa թերթը:

«Նոր իսլամական ահաբեկչություն սեպտեմբերի 11-ից մինչեւ մարտի 11-ը» գրքում ուշադրությունը հրավիրված է բեն Լադենի խմբից Աբու Բեիդ ալ Կուրաշի մականունով մեկի՝ 2002 թվականին արած հայտարարությանը: Նա պնդում է, որ «Ալ Ղաիդան» իր մարտավարությամբ եւ կառուցվածքով այժմ գործում է նոր, ասիմետրիկ պատերազմներ հայեցակարգով, որը չի տարվելու պետությունների միջեւ հավասար զենքի պայմաններում: Այս հայեցակարգի դրույթները դեռեւս 1989 թվականին ներկայացվել էին ամերիկյան «US Marine Corps Gazette» ամսագրում: Այս պատերազմում հակառակորդները միայն նրանք են, ովքեր շատ լավ են տիրապետում բարձր տեխնոլոգիաներին: Ահաբեկիչները որպես զենք օգտագործում են ինտերնետը, քանի որ դա տալիս է հարձակվելու եւ համատեղվելու առավելագույն հնարավորություններ:

«Կիբերտարածությունը թույլ է տալիս անցկացնել տեսական պատերազմներ, վարժեցնել այս ասպարեզում, ինչպես նաեւ ստեղծել ակտիվ կամ առանձին խմբերի միջեւ», նախազգուշացնում է ամերիկյան ամսագիրը:

Բացի մեկանգամյա օգտագործման արբանյակային հեռախոսներից եւ բջջային քարտերից, որոնց համարները անհնար է իմանալ, «Ալ Ղաիդան» օգտագործում է Hotmail եւ Yahoo փոստային ծառայությունները, որոնք հնարավոր չէ վերահսկել, քանի որ ահաբեկիչները օգտագործում են օրինական հաճախորդների հասցեն եւ գաղտնաբառը, որոնք վաճառվել են ահաբեկիչներին: Այս ձեւով ահաբեկիչները իրականում չհանդիպելով՝ կարող են անընդմեջ կամ պահպանել միմյանց հետ: Բեն Լադենի համար ինտերնետը կարեւորվում է իր ստեղծած

էլեկտրոնիկայի ֆակուլտետի կամ հաքերների դպրոցի գոյությամբ եւ Պակիստանի կիբերինստիտուտով, որն աշխատում է SCADA այնպիսի համակարգերի վրա, որոնք հնարավորություն են տալիս ինտերնետի միջոցով կառավարել ջրաժան ցանցերը, գազային եւ նավթային խողովակաշարերը եւ ատոմային կայանները:

Ռաստրոմը հիշեցնում է լիբանանյան «Հզբոլլահ» խմբավորման մասին, որը նույնպես ժամանակակից գերհզոր տեղեկատվական տեխնոլոգիաները տնօրինողներից մեկն է, եւ հետեւյալ կանխատեսումն է անում. «Ալ Ղաիդան» կարող է կազմակերպել մեծամասշտաբ ահաբեկչություն, ավանդական ահաբեկչական գործողությունները համատեղելով տեղեկատվական պատերազմի հետ, որը աշխարհին կկանգնեցնի տնտեսական մեծ աղետների առաջ»: Ըստ Ռաստրոմի կանխատեսումների, հնարավոր է այսպիսի սցենար՝ պայթյուն արեւմտյան ֆինանսական հաղորդակցումներից մեկի կենտրոնում, որին կհետեւեն ինտերնետային հարվածները տնտեսական կարեւորության այնպիսի հանգույցների վրա, ինչպիսիք օրինակ, ամերիկյան Fedwire եւ միջազգային Chips եւ Swift բանկային փոխանցումներ իրականացնող համակարգերն են:

«Ակնհայտ է դառնում, որ «Ալ Ղաիդան» շատ ավելի ժամանակ է վատնել ուսումնասիրելու կիբերտարածությունը, քան ենթադրում էինք, նա կփորձի հարվածել ամենազգայուն կետերին: Բեն Լադենը ավելի շահագրգռված է ոչնչացնելու համակարգեր, քան առանձին մարդկանց: Հիմա վերանում է. «Կսկսի՞ արդյոք նա կիբեր պատերազմ» հարցը, արդեն կարեւոր է դառնում, թե նա երբ կսկսի», ավարտում է Ռաստրոմը:

Ս. Հ.

Քաղված՝ www.web-hack.ru-ից

Յաղոնչիկին կտեղավորեն մոսկովյան հատուկ մեկուսարանում՝ Խոդորկովսկու հարեւանությամբ

Երեկ «Ազգում» տեղեկություն հրապարակվեց, որ ԱՄՆ իշխանությունները որոշել են Փենսիլվանիայի նահանգի «Ալենվուդ» դաշնային բանտից ազատել եւ Ռուսաստան արտաքսել հայտնի հրեական հեղինակություն Վյաչեսլավ Իվանկովին, որն առավել հայտնի է Յաղոնչիկ մականունով: ՌԻՍ գործակալությունը հաղորդում է, որ երեկ գիշեր նա արդեն արտաքսվել է Ռուսաստան:

Ամերիկյան բանտում գրեթե 7 տարի անցկացնելուց հետո երեկ Յաղոնչիկը հատուկ չվերթով հասել է Մոսկվա: Նա արդեն հանձնված է ՌԴ իրավապահ մարմիններին: Ռուսաստանցի մի խումբ իրավապահներ թռիչքի ընթացքում ուղեկցել են նրան:

3,5 մլն դոլարի շորթման համար ամերիկյան դատարանը Յաղոնչիկին դատապարտել էր 115 ամսվա

բանտարկության: Հետագայում լավ վարքի համար նրա ժամկետը կրճատել էին:

2004 թ. հունիսին ՌԴ գլխավոր դատախազությունը ԱՄՆ-ին խնդրել էր Յաղոնչիկին արտաքսել Ռուսաստան, որտեղ նա մեղադրվում է 1992 թ. մոսկովյան սրճարաններից մեկում Թուրքիայի երկու քաղաքացիների սպանելու մեջ: Սակայն սպանությունների մեղքը դժվար թե հաջողվի ապացուցել, քանզի Յաղոնչիկի մեղադրական գործի ստեղծմանը նպաստած երկու վկաներից մեկը մահացել է, մյուսն էլ ապրում է Թուրքիայում եւ հազիվ թե Ռուսաստան գա կրկին վկայություններ տալու:

Ռուսական լրատվամիջոցներին արդեն հայտնի է դարձել, որ Յաղոնչիկին տեղավորելու են Մոսկվայի «Մատրոսկայա տիշինա» քննչական մեկուսարանի հատուկ մասնաբաժնում, որտեղ ներկայումս պահվում է նաեւ հայտնի միլիարդատեր Խոդորկովսկին:

Մոսկովյան ֆիրման Եվրոպա էր ուղարկում չեչեն գրոհայինների

Մոսկվայի ՆԳԳՎ տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի վարչության եւ ԱԳԾ սահմանադրական կարգի պաշտպանության եւ հակաահաբեկչական պայքարի վարչության աշխատակիցները հատուկ գործողությամբ վերացրել են զբոսաշրջության այն ֆիրման, որը կեղծ անձնագրերով էր ապահովում չեչեն գրոհայիններին:

Մայրաքաղաքի ՆԳԳՎ ՏՀՊՎ մասնի խմբի պետ Ֆիլիպ Զոլոտնիցկին երեկ Ինտերֆաքսի թղթակցին ասել է, որ վերջերս Հյուսիսային Կովկասում ձերբակալված գրոհայինների մոտ հայտնաբերվել են ՌԴ կեղծ արտասահմանյան անձնագրեր՝ շենգենյան գոտու երկրների այցագրերով: Օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հայտնաբերվել է զբոսաշրջության այն ֆիրման, որը կեղծ անձնագրեր էր պատրաստել գրոհայինների համար: Ֆիրման գլխավորում էին 2 կանայք. մեկը մոսկվացի է, մյուսը՝ Վրաստանի քաղաքացի:

Զոլոտնիցկու խոսքերով, կեղծ անձնագիր պատրաստելիս գրոհայինի լուսանկարը փակցնում էին ՌԴ որեւէ քաղաքացու կորցրած անձնագրի վրա: Նման անձնագրերով գրոհայինները Եվրոպա էին մեկնում Ուկրաինայի հսկիչ անցակետերով, որտեղ չգիտեին ռուսական անձնագրերի կորստի մասին:

Նման ծառայության դիմաց գանձվում էր 1500 դոլար (Հյուսիսային Կովկաս հասցնելու դեպքում՝ 3000 դոլար): Օպերատիվ աշխատողներից մեկը գործողության ընթացքում ներկայացել էր որպես չեչեն գրոհային: Ֆիրման կեղծ անձնագրի դիմաց պահանջել էր 1500 դոլար: Մոսկովյան ռեստորաններից մեկում անձնագրի հանձնման պահին ֆիրմայի ղեկավարները ձերբակալվել էին: Նրանց նկատմամբ հրեական գործ է հարուցվել ըստ «փաստաթղթերի կեղծում» հոդվածի:

Արդեն հայտնի են այն բոլոր անուն-ազգանունները, որոնցով հողարկվելով չեչեն գրոհայինները մեկնել էին արտասահման: Գրոհայինների «նոր» ազգանունները կփոխանցվեն Ինտերպոլին:

ԹԵԺ ԿԵՏԵՐ

Իրաքում սպանվել է բուլղար պատանդներից մեկը

Պայթյուն Բաղդադում

Իրաքցի գրոհայիններ մահապաժի են ենթարկել պատանդ վերցված երկու բուլղարացիներից մեկին: Քաթարյան «Ալ Ջազիրա» արբանյակային հեռուստաընկերությունը հաղորդել է, որ մահապատիժը պատկերող տեսաերիզն իր տրամադրության տակ է, բայց եթերում չի ցուցադրվելու: Իրաքցի գրոհայինները սպառնացել են 24 ժամվա ընթացքում սպանել նաեւ երկրորդ պատանդին:

«Ես կարող եմ հաստատել, որ Բուլղարիայի քաղաքացիներից մեկը մահապաժի է ենթարկվել», հայտարարել է Բուլղարիայի կառավարության ներկայացուցիչ Դիմիտար Կոնեը: Ռոյթեր գործակալության թղթակցի տվյալներով, սպանված պատանդի անունն է Գեորգի Լազով:

Անցյալ հինգշաբթի երկու բուլղարացիների առեւանգման մասին հայտարարել էր հայտնի ահաբեկիչ Աբու Մուսաբ ալ Զարքաուիի «Ջամաաթ ալ Թավիդ Ջիհադ» խմբավորումը: Իրաքցի գրոհայինները Բուլղարիայի իշխանություններից պահանջել էին զորքերը դուրս բերել Իրաքից: Պատանդներն Իրաքում պայմանագրով աշխատում էին որպես բեռնատարի վարորդներ: Իրաք էին եկել 2004 թ. հունիսի 19-ին եւ անհետ կորել էին նույն ամսվա 27-ին:

Բուլղարիայի կառավարությունը հայտարարել է, թե չի փոխելու Իրաքի նկատմամբ վարվող քաղաքականությունը եւ այդ երկրից դուրս չի բերելու իր զինծառայողներին:

Միաժամանակ Ֆրանսիրեսը հաղորդում է, որ երեկ առավոտյան հուժկու պայթյուն է որոտացել Բաղդադի կենտրոնում: Ահաբեկչությունը տեղի է ունեցել առավել լավ պաշտպանվող թաղամասերից մեկում՝ այսպես կոչված «կանաչ գոտում», որտեղ գտնվում են կառավարական մի շարք հիմնարկներ, ինչպես նաեւ ԱՄՆ դեսպանատունը:

Իրաքի կառավարության նիստերի դահլիճից ոչ հեռու տեղի ունեցած պայթյունից զոհվել է 9 մարդ, 23-ը վիրավորվել են: Ավտոկայանատեղում կանգնեցված 8 ավտոմեքենաներ բոցավառվել են: Ականատեսների վկայությամբ, պայթյունից հետո լսել են ավտոմատային կրակահերթեր:

«Իրաքում օտարերկրացիների առեւանգումները կազմակերպում են թերեւս ԱՄՆ-ը եւ Իսրայելը»

Իրանի հոգեւոր առաջնորդ, այաթոլլահ Ալի Խամենեին հայտարարել է, որ Իրաքում օտարերկրացիների առեւանգումների եւ սպանությունների իսկական կազմակերպիչները թերեւս ամերիկացիներն են եւ նրանց դաշնակից իսրայելցիները:

Սինգապուրի վարչապետ Գո Չոկ Տոնգի հետ կայացած հանդիպման ժամանակ Խամենեին բառացիորեն ասել է. «Մենք լուրջ կասկածներ ունենք, որ այդ սարսափազդու ահաբեկչություններն իրականացնում են ամերիկացի եւ իսրայելցի գործակալները: Մենք չենք կարող հավատալ, թե, օրինակ, ֆիլիպինցիներին առեւանգող կամ ամերիկացիներին գլխատող մարդիկ մահմեդականներ են»:

Այաթոլլան գործակալությունը մեջբերում է Ալի Խամենեիի այն խոսքերը, թե Իրանը վճռականորեն պայքարում է ահաբեկչության դեմ, քանզի այդ պայքարը համարում է «ոչ միայն անհրաժեշտ, այլեւ անչափ կարեւոր»:

Աֆղանստանում ամերիկյան զորքը կազմակերպում է նախագահական ընտրություններ

Աֆղանստանում տեղաբաշխված ամերիկացի զինծառայողները հրաման են ստացել պայմաններ ստեղծել հոկտեմբերի 9-ին երկրում նախագահական ընտրությունների անցկացման համար: Այդ մասին Ասոշիեյթեդ Պրես գործակալությանը հայտնել է Աֆղանստանում ամերիկյան զորքի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Դեւիդ Բարնոն: Նրա խոսքերով, ընտրությունների անցկացումը չի տեղի գլխավոր խնդրից՝ Ուսամա բեն Լադենի, մոլլա Մուհամմեդ Օմարի եւ մյուս խոշոր ահաբեկիչների որոնումներից:

Նախագահական ընտրությունները Աֆղանստանում քանիցս հետաձգվել էին, քանի որ չկային ընտրական ցուցակներ: BBC-ն հաղորդում է, որ կազմված ընտրական հանձնաժողովում ընդգրկված են աֆղաններ եւ ՄԱԿ-ի ներկայացուցիչներ: Հանձնաժողովի նախագահն է Զաֆիմ Շահը:

Նախագահության գլխավոր թեկնածուն ներկայիս ժամանակավոր նախագահ Համիդ Կարզայն է: Եթե ընտրությունների առաջին փուլում նա ստանա քվեների նվազ քան 50 տոկոսը, ապա կանցկացվի երկրորդ փուլ:

Զաֆիմ Շահը հայտարարել է, որ խորհրդարանական ընտրությունները անցկացվելու են ավելի ուշ՝ եկող տարվա ապրիլին կամ մայիսին:

ԱՄՆ Պետդեպարտամենտի մամլո քարտուղար Ռիչարդ Բաուչերը խոստացել է, որ Աֆղանստանի նախագահական ընտրությունների համար իր երկիրը կհատկացնի անհրաժեշտ միջոցներ, կպատրաստի համապատասխան անձնակազմ եւ կհոգա քվեարկության անվտանգության ապահովման մասին: Վերջին խնդիրը հանձնարարված է գեներալ Բարնոյին եւ նրա ենթականերին:

Այս տարվա մարտից ամերիկացիները Աֆղանստանում թալիբների եւ «Ալ Ղաիդայի» գրոհայինների դեմ լայնածավալ գործողություն են սկսել «Լեռնային փոթորիկ» պայմանական անունով: Պակիստանում եւս ձեռնարկվել է համանման գործողություն: Աֆղանստանից ներկայումս դուրս է բերվում հակաահաբեկչական գործողությունն իրականացրած ծովային հետեւակի 2000-անոց զորաբաժինը: Երկրում մնում են ամերիկացի 17 հազար զինծառայողներ, որոնք կպայքարեն գրոհայինների դեմ եւ կփորձեն ապահովել ընտրությունների անվտանգությունը:

Վերջին խնդիրը դյուրին չի լինելու, քանզի արդեն սպանվել են ընտրական հանձնաժողովի 6 աշխատակիցներ: Իսկ ՆԱՏՕ-ի վեցուկես հազարանոց ստորաբաժանումը դժվար թե կարողանա օգնել ամերիկացիներին, քանի որ տեղաբաշխված է գլխավորապես Քաբուլում, մինչդեռ գավառների զգալի մասը մնում է վերահսկողությունից դուրս:

Պ. Բ.

Մշակույթ

Երկրաշարժից հետո Գյումրիում շատ սներ խանդվեցին, մարդկային շատ զոհեր եղան, բայց կանգուն մնաց հոգետուն՝ գյումրեցիների սիրելի դրամատիկական թատրոնը: Այդ շենքը դարձավ բոլորի փայփայանքի եւ հոգածության առարկան, այդ շենքը հույս էր, որ կա կյանք...

Եղան հյուրախաղեր, եկան երեւելի արվեստագետներ, բայց գյումրեցին սպասում էր իր սիրելի թատրոնի ներկայացումներին:

Ծանր տարիներ էին: Մութ: ցուրտ: Թատրոնը չէր կարողանում «շնչել» իր մեջը: Բայց, ինչպես Ջիվանին կասեր՝ «Ջախոռդ օրերը կուգան ու կերթան»:

Եկավ «Լինսի» հիմնադրամի բարերար ձեռը: Թատրոնի շենքը նորից սպացավ իր շքեղաշուք տեսքը: Թատրոնի տնօրեն նշանակվեց թատերական աշխարհում բացառիկ գործունեություն ծավալած մի մարդ՝ Էդվարդ Պողոսյանը, որը կարճ ժամանակահատվածում փակեց կուտակված պարտքերը, իրար հետեւից ազդագրերում երեւացին նոր բեմադրությունների անուններ, որոնք էլ կամաց-կամաց կենդանացրին թատրոնի ներին կյանքը, հանդիսականի բերած ոգեւորությունն ուժ տվեց թատրոնի նվիրյալներին ավելին անելու՝ հույսը դնելու միմիայն ստեղծագործ աշխատանքի վրա:

Տնօրենին մեծ փորձություններ էին սպասում, որը նա հաղթահարեց՝ կոլեկտիվի հետ համատեղ: Թատրոնի գեղարվեստական ղեկավար նշանակվեց երիտասարդ, շնորհալի ռեժիսոր Ասպրամ Բաղդասարյանը: Թատրոնը մշակեց մինչեւ 2007 թ. ստեղծագործական ծրագիր:

Ծրագրերից մեկը հայ անվանի դերասաններին Գյումրի հրավիրելն էր: Կան արտիստներ, որոնց բեմական կյանքը սկիզբ է առել Լենինականի թատրոնում, կա նաեւ մեկ այլ հանգամանք՝ բոլոր գյումրեցիները չէ, որ հնարավորություն ունեն մայրաքաղաքում ներկայացումներ դիտելու:

Մեծատաղանդ Վարդուհի Վարդերեսյանը սրտի տրոփյունով ընդունեց թատրոնի հրավերը՝ Կասանոյի «Ծառերը կանգնած են մահանում» պիեսում Տատիկի դերակատարման առիթով: Այդ դերը նա խաղացել էր ԱՄՆ-ում, Բեյրութում, սակայն իր սիրելի թատրոնի հրավերը նա կարեւորեց՝ նոր մեկնաբանության ակնկալիքով, քանի որ բեմադրության ռեժիսոր Ռաֆայել Գրիգորյանը (ԱՄՆ) նոր եւ հետաքրքրական մոտեցում էր ցուցաբերել պիեսին:

Մելոդրամատիկ այս պիեսում Տատիկի դերը երազում են խաղալ բոլոր դերասանուհիները: Վ. Վարդերեսյանի խաղը հասավ բարձրակետի իր հրաշալի ձայնի, հոգեկան հարուստ աշխարհի, վարպետության շնորհիվ եւ գերեց հանդիսականին: Երեք ներկայացումներում չկրկնեց իրեն, ամեն օր բերեց հուզական մի նոր երանգ, պարուրեց բեմը ջերմությամբ, սիրով: Նրա Տատիկը իր նորոգված կյանքով այնպիսի հավաս էր բերում, որ անգամ պիեսին ծանոթ հանդիսականը տրվում էր այդ «խաբկանքին»: Երբ պարզվում է, որ այդ «կենսուրախ, կյանքով լի մարդն» իր թոռնիկը չէ, չի կորցնում սիրո, խանդաղատանքի եւ փաղաքանքի ջերմությունը կեղծ Մարտինոյի եւ Իզաբելայի նկատմամբ: Արտիստուհին այնպիսի վարպետությամբ էր խաղում, որ դահլիճը շունչը պահած հետեւում էր՝ վախենալով նրա կյանքի համար: «Ծառերը կանգնած են մահանում» դարձվածը դերասանուհու համար դառնում է դիմանալու, ծանր վիշտը հաղթահարելու կարեւոր սկզբունք թոռնիկի տված հարվածը տանելու համար. իր վերաբերմունքով, կեցվածքով ապացուցում է, թե արյան գործոնը չէ, որ մարդկանց կապում է միմյանց հետ, որ կա ավելի կարեւորը՝ բարոյականությունը, երբ օտարն է կիսում քո վիշտը, օտարն է ցավում քեզ չկորցնելու համար:

Ներկայացման մասնակից բոլոր դերասանները ձգտում էին խաղալ այնպես, որ Վ. Վարդերեսյանին արժանի խաղընկերը լինեն: Հովհ. Հովհաննիսյանը, ՀՀ վաստակավոր արտիստուհի Անահիտ Հարությունյանը, Պողոս Սոմիասյանը, Ռաֆայել Գրիգորյանը, ներկայացումը դարձրին իրոք տոն, որի պսակը հայ բեմի հրաշալի արտիստուհին էր: Հանդիսականը երեք օր ծափահարում էր նրան՝ այդպես արտահայտելով իր սերը թատրոնի ու Վարդուհի Վարդերեսյանի արվեստի նկատմամբ: Դա երեւույթ էր, մոռացված երեւույթ, երբ հանդիսականը 45 րոպե չէր լքում դահլիճը:

Գյումրու Վ. Աճեմյանի անվան դրամատիկ թատրոնը գիտե իր հանդիսականի պահանջը: Եվ խաղացանկային իր քաղաքականությունը վարում է այնպես, որ ամեն մի հանդիսական գտնի իր հարցի պատասխանը: Այդպես է կայանում մեր օրերի թատրոնը:

ՄԻՐԻԼՈՒՅՍ ՂԱՐԿԱՍՅԱՆ
ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ
Գյումրի

Արտիստ ու ժամանակ

Վարդուհի Վարդերեսյանը Գյումրիում

Հայը դերասան Սիդնի Փուաթյեի մասին

«Սիդնի Փուաթյե. մարդը, դերասանը, կուռքը» վերնագիրն է կրում վերջերս Հյուսիսային Կարոլինա համալսարանի հրատարակչատան լույս ընծայած Արամ Կուստուզյանի ուսումնասիրությունը, որը բացահայտում է հոլիվուդյան կինոարտիստի 1960-80-ական թթ. ամենասիրված եւ ամենահայտնի սեռամորթ դերասանի կենսագրական մանրամասները:

«Գուցեակիր, թե ով է գալու ճաշելու», «Պարոնին՝ սիրով», «Հովսաքուբաններ», «Գիշերվա տենդում» եւ այլ ֆիլմերում անզիջող եւ կայուն բնավորության տեր կերպարներ մարմնավորած Փուաթյեն եղել է նաեւ իր՝ աֆրո-ամերիկյան ժողովրդի իրավունքների համառ պայքարող՝ ներշնչված, անշուշտ, իր ժամանակների ամենաազդեցիկ դեմքերից դոկտ. Մարտին Լյութեր Քինգի գաղափարներով, որոնք հորդորում էին խաղաղ միջոցներով հասնել սոցիալական հավասարության եւ խտրականության վերացման:



Ըստ «Արմինյն միրոր սփեյթեյթր» շաբաթաթերթի հունիսի 19-ի լրատվության, 358 էջանոց գիրքը, որը բաղկացած է 17 գլուխներից եւ 5 մասից, առաջինն է, որ հետաքրքրական դրվագներով ներկայացնում է տաղանդավոր դերասանին՝ նրա դժվարին մանկությունից մինչեւ համբավի ձեռքբերում եւ մրցանակների նվաճում:

Հալլեյի գիսավորը հին հայկական մետաղադրամի վրա՞

Կանբերայից (Ավստրալիա) ABC Science Online լրատվական հաղորդագրությունը «Արմինյն միրոր սփեյթեյթր» շաբաթաթերթի հունիսի 5-ի համարում տեղեկացնում է, որ, ըստ իտալացի եւ հայ գիտնականների ուսումնասիրությունների, հայոց արքայից արքա Տիգրան Մեծի (մ. թ. ա. 95-55 թթ.) մետաղադրամի վրա պատկերված կորոյոչ աստղը կարող է Հալլեյի գիսավորը լինել: Ենթադրվում է, որ դրա հայտնվելը մ. թ. ա. 87 թ. առիթ կարող էր հանդիսանալ, որ մետաղադրամի վրա դրոմվելով պատմության մեջ հավերժացվեր այդ նշանակալի երեւույթը: Գիտնականների եզրակացությունը հրատարակվելու է Աստղագիտության թագավորական ընկերության «Աստղագիտություն եւ գեոֆիզիկա» պարբերականում:

Հալլեյի գիսավորն իր անվանումն է ստացել անգլիացի աստղագետ եւ գեոֆիզիկոս Էդմունդ Հալլեյի (1656-1742) անունից, որը 1705-ին արձանագրելով, որ այդ գիսաստղը հայտնվում է մոտավորապես յուրաքանչյուր 76 տարին մեկ, կանխատեսել է դրա վերահայտնվելը 1758 թ.: Դրանից առաջ գիսավորի հայտնվելը նշմարել էին 1682-ին, 1607-ին, 1531-ին եւ այլն:

Կանբերայում գործող ավստրալիական ազգային համալսարանի աստղագիտության եւ աստրոֆիզիկայի ուսումնասիրությունների ֆակուլտետի պրոֆեսորներից Վինս Ֆորդի աշխատակազմի համոզմամբ ապացույցներ կան, որ գիսաստղի հայտնվելը նշանակալի իրադարձություն է եղել Հալլեյի եւ նույնիսկ Քրիստոսի ծննդից շատ առաջ: Չինական արձանագրությունների մեջ մ. թ. ա. 240-ի մայիսի 25-ն է նշված որպես գիսաստղի հայտնության ամենահին թվականը: Այդ ժամանակ, ըստ ուսումնասիրությունների, գիսաստղն ավելի մեծ է եղել: «Արեւի շուրջ պտտվելով, այդ գիսաստղերը սովորաբար կորցնում են իրենց չափի մոտ 10 տոկոսը», նշել է Ֆորդը:

Ավելացնենք, որ վերջին անգամ գիսաստղը հայտնվել է 1986 թ.: Եթե պարբերականությունը պահպանվի, դրա հաջորդ «այցելությունը» տեղի կունենա 2062 թվին:

Հ. Օ.

ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Թէֆէեանը Նիւ Եորքում

«Թէֆէեանի բանաստեղծական ժառանգութիւնը հանի մը է՝ միտի ու սրտի դեռ չմակաբերուած անպարզ գեղեցկութիւններով լի: Զայն պեղելու ամէն լուրջ փորձ կրնայ վայելել աղահովութիւնը առա՛ջ այսպէս նրան բնութագրել **Վահէ Վահեան** բանաստեղծ խմբագիրը, որը կազմել էր ուսուցիչ-բանաստեղծի հարիւրամեակի ժողովածուն:

Սակայն նրա այսօրինակ մեկնաբանութիւնը եւ ուրիշ շատ շատերի բնութագրիչ խոսքերն անգամ ամբողջապէս չեն կարող բացայայտել Թէֆէեան արուեստագէտին, որ այդ «անկարողութիւնը» պայմանատրել է իր անձի ներհակ էութեամբ.

Հոգիս իմս է, եւ ոչ ոք պիտի ամբողջ զայն ճանչնայ
Իր լույսերովը պայծառ, իր մթութեամբը ահեղ...

Նրա բանաստեղծութիւնները իր ազնիւ ու նուիրական ներաշխարհի արտացոլումն են, հոգու ցաւը, սէրն ու կարօտը, իսկ այդ ամէնի ակունքը իր եւ ժողովրդի կեանքն է՝ ծանր ու տառապալից. «Իր մէջն են, այս ամէնուն արդիւնք, արիութիւն, հպարտութիւն, համեստութիւն ու հաւատ, սրբազան մտո՞ւս, նկատում է Յակոբ Օշականը, որով փաթթուած ան պիտի յօժարի իր ճամբան, աւելի տխուր, քան Գողգոթան»:

Նկատուած է, որ Վ. Թէֆէեանը Սփիւռքում պաշտամունքի հասնող խորհրդատրութիւն ունի, ուստի բնական է, որ առայսօր շարունակում են բանաստեղծի յոբելենական հանդիսութիւնները: Այս տարուայ Մայիսին Թէֆէեան Մշակութային Միութեան Նիւ Եորք Նիւ Ճըրզիի մասնաճիւղի նախաձեռնութեամբ Սուրբ Թովմաս եկեղեցու սրահում կայացաւ **Վահան Թէֆէեանի** ծննդեան 125-ամեակին նուիրուած յոբելենական երեկոյ, որի հանդիսավարն էր Տկն. **Զարմինէ Պողոսեանը**:

Հանդիսութեանը իրենց գործուն մասնակցութիւնը բերեցին հայրենի ասմունքի վարպետ, արեւմտահայ բանաստեղծութեան գիտակ Ազատ Գասպարեանը եւ ճանաչուած երգիչ-երգահան Պերճ Թիւրաքեանը՝ Նիւ Եորքից: Նրանք փոխնիփոխ ներկայացրին Վ. Թէֆէեանի բանաստեղծական շքեղ ու անկրկնելի աշխարհը: Ընդ որում, նորերս սիրելի երգիչ երգահանը թողարկել եւ այս երեկոյի ընթացքում ներկայացրեց նաեւ իր հեղինակային երգի խաչասալիկը՝ բանաստեղծի տեքստերով: Մօտ երկու ժամ արուեստագէտները եւ հանդիսավարը կարողացան ներկաներին պահել Թէֆէեանի բանաստեղծութեան հմայքի լուսաւոր ազդեցութեան տակ:

Հանդէսին ներկայ էր ազգային բարերար, արուեստին ու գրականութեանը քաջալերող, «Սայաթ-Նովա» ամենամեայ մրցանակաբաշխութեան հովանաւոր Պրն. **Վահագն Հովնանեանը:**

Ներկաները սրտաբուխ շնորհակալութիւն յայտնեցին ԹՄ Միութեանը, մասնաւորապէս կազմակերպչին՝ Զարմինէ Պողոսեանին, որ նման տպաւորիչ ձեռնարկներով կարողանում է արթուն պահել համայնքի գրամշակութային կեանքը: Առանձնապէս հայրենիքում ապրող մտաւորականը լաւ է գիտակցում նման նախաձեռնութիւնների իրական արժէքը:

Ովկիանից այն կողմ, հեռաւոր Նիւ Եորքում ապրող հայութեան աչքերում այդ օրը որսացի աւանդական թախիծն ու կարօտը, իսկ սրտերո՞ւմ...

Ո՞վ կարդալ սիրտը գիտէ...

կասեր ինքը՝ մեծն Վահան Թէֆէեանը:

ԷՄՄԱ ԳԱՍՊԱՐԵԱՆ,
«Սփիւռք» գիտաքննական
կենտրոնի աշխատակից

Բանաստեղծական լույսը «Այս է մարմինն իմ» ժողովածուում

Հայ գրողների ստեղծագործությունների ժողովածուների վերջին շաբաթվա բազմաթիվ շնորհանդեսները բացատրվում են գրողների համահայկական երկրորդ համաժողովով, որը համատեղել էր սփյուռքում եւ հայրենիքում հայ գրականությունը կերտողներին: Այդ շարքում նաեւ բանաստեղծ Սարգիս Կիրակոսյանին, որը, ինչպես հավաստեց ՀԳՄ քարտուղար Դավիթ Մուրադյանը, վաղուց ի վեր հերկում է սփյուռքի գրական անդաստանները եւ ձեռքը ժամանակի զարկերակին՝ ներկայացնում համամարդկային ալեկոծումների, երազանքների, տվայտանքների եւ խոհերի համապատկերը:

Սարգիս Կիրակոսյանի գործընկերները գտնում են, որ Բեյրութում ստեղծագործող բանաստեղծը տեսնում է հայ գրականության ամբողջական համայնապատկերն ու դրա ֆոնին մատուցում ինքնատիպ ու արժեքավոր գրականություն: Կիրակոսյանի հանրությանը մատուցած բանաստեղծությունների առաջին ժողովածուին՝ «Այս է արյունն իմ» հաջորդել է 30 տարվա լռություն, որն օրերս պսակվեց «Այս է մարմինն իմ» ժողովածուով: Այս երկու ժողովածուների մասին Դավիթ Հովհաննեսը կարծիք հայտնեց, որ դրանք մեկը մյուսին շարունակող, ամբողջացնող, կյանքի, մտածողության ծրագրեր են:

Ինքը՝ հեղինակը «Այս է մարմինն իմ» ժողովածուն համարում է «տարբեր ժամանակներում, բոլորովին այլաբնոյթ փորձառութիւններու, երբեմն նոյնիսկ հակադիր հոգեվիճակներու եւ ապրումներու անդրադարձներով կերտարանք սացած բանաստեղծական շարքեր են ասոնք, որոնք ձայնալարային եւ յղացքային այլերանգ հնչեղութիւն ու դիմագիծ ունենալով հանդերձ՝ կը կազմեն մէկ ու անբաժան ամբողջութիւն՝ իբրեւ մարմին ու ոգի»: Նա նաեւ հարցնում է.

«Եթէ կրնամ՝ ըսէ՛ք, խնդրե՛մ, թե ուր եմ ես
եւ ծիշդ ուր է վերջակետը իմ այ խօսքի ծածկագիրը»:

Իհարկե այս եւ շատ այլ հարցերի պատասխաններ բանաստեղծը տալիս է իր հրատարակած 2 եւ դեռ անտիպ 5 ժողովածուներում, բայց հասատ նրա խոսքի վերջակետը մնալու է ժամանակներին: Ի դեմ, պոեզիային լիակատար համահունչ ձեւավորումն իրականացրել է Ռոբերտ Էլիբեկյանը:

Իսկ այ, մեր գրական աշխարհի բեռն ու վայելքը կրող անհատները, որ ներկայացել էին շնորհանդեսին, ցավալիորեն չկարողացան կամ ինչ-ինչ պատճառներով չուզեցին դրսեւորել մտավորականին հատուկ վարվելակերպ եւ մի կողմ դնելով էթիկա երեւույթը, վարպետորեն վազանցեր կատարեցին միմյանց նպատակադրված վիրավորանքներ հասցնելու մարաթոնում, որում միակ գնահատելին թերեւս օգտագործված հարուստ լեզվապաշարն էր: Արդարացի լինելու համար ասեմ, որ եղան նաեւ խոսքային հրաձգությամբ ուղեկցվող մարաթոնին չմասնակցողներ եւ, մի կողմ թողնելով անպատվաբեր մարամասները հավելեմ, որ ուղղակի որպես հայասանաբնակ ամոթի զգացում ունեցա անվայելուչ իրավիճակ հրահրած Դավիթ Հովհաննեսի եւ նրա բացած ուղին շարունակող անձանց փոխարեն:

ՆԵՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Փյունիկի» գերազանց մեկնարկը

Հայաստանի չեմպիոն Երեւանի «Փյունիկը» գերազանց մեկնարկեց չեմպիոնների լիգայի որակավորման առաջին փուլում՝ բարձր պահելով հայկական ֆուտբոլի վարկանիշը: Ի տարբերություն «Միկայի», «Փյունիկը» մրցակցի դաշտում աչի ընկավ ագրեսիվ խաղով եւ արժանի հաղթանակ տոնեց: Հատկանշական է, որ «Պոբեդայի» հետ խաղում իրենց հիանալի դրսեւորեցին մեր թիմի ամենաերիտասարդ ֆուտբոլիստները՝ 17-ամյա Էդգար Մանուչարյանն ու Ժորա Հովհաննիսյանը, որոնք էլ դարձան մրցակցի դարպասը խփած 3 գոլերի հեղինակներ: Առդեն 3-րդ րոպեին Էդգար Մանուչարյանն իր վրա բեւեռեց հանդիսականների ուշադրությունը: Նրա հուժկու հարվածը մեծ դժվարությամբ հետ մղեց դարպասապահը: Իսկ ահա 15-րդ րոպեին Աղվան Մկրտչյանի ճշգրիտ փոխանցումից հետո մեն-մենակ ոլորտ դարպասապահի դիմաց դուրս եկավ Մանուչարյանն՝ աչի ընկավ նաեւ գոլային փոխանցմամբ, որը դիպուկ հարվածով եզրափակեց Հովհաննիսյանը: Իսկ մինչ ընդմիջման գնալը Էդգարն իր 2-րդ գոլը խփեց: 42-րդ րոպեին «Փյունիկը» դաշտում մնաց 10 հոգով: Սակայն դա էլ չփոխեց դաշտի տերերին պարտությունից: Նրանց միայն մեկ անգամ հաջողվեց գրավել «Փյունիկի» դարպասը:

Այսպիսով, հաղթելով 3-1 հաշվով, «Փյունիկը» հուլիսի 21-ին կայանալիք պատասխան խաղից առաջ հիանալի հնարավորություն ունի շարունակելու պայքարը: Հիշեցնենք, որ 2-րդ փուլում «Փյունիկի» մրցակիցը լինելու է Դոնեցկի «Շախտյորը»:

Չեմպիոնների լիգայի որակավորման առաջին փուլում կայացել է եւս երկու հանդիպում: Մալթայի «Սլիեման» սեփական հարկի տակ 0-2 հաշվով զիջել է Լիտվայի «Կաունասին», իսկ Բոսնիայի «Շիրոկի բրիեգը» հաղթել է Բաքվի «Նեֆչիին» (2-1): Այսօր ՈՒԵՖԱ-ի գավաթի մրցաշարի առաջին հանդիպումները կանցկացնեն «Շիրակն» ու «Բանանցը»: «Շիրակը» Երեւանում կմրցի Մոլդովայի «Տիրասպոլի» հետ (խաղի սկիզբը ժամը 19-ին), իսկ «Բանանցը» Մարիուպոլում ուժերը կչափի «Իսիչեւեցի» հետ:

«Պոբեդա» Մակեդոնիա-«Փյունիկ» Հայաստան՝ 1-3 (0-3)

13 հուլիսի, Սկոպիե, քաղաքային մարզադաշտ:

Մրցավար՝ Դամիր Սկոմինա (Սլովենիա):

«Պոբեդա»- Պանչեւ, Կաֆինկովսկի, Նաչեւ, Գեորգիեւ (Կրստեակի, 71), Զդրավեակի, Ջոկիչ, Գեորգիեսկի, Զդրավեսկի (Մանեւակի, 45), Դիմիտրովսկի (Դիմիտրովսկի, 18), Դե Հեսուս Դա Սիլվա, Գեշոսկի:

«Փյունիկ»- Ատուլա Բեսե, Արթուր Մկրտչյան (Նդումբուկ Բալեդ Բա, 77), Ալեքսանդր Թադեւոսյան, Ռաֆայել Նազարյան, Սարգիս Հովսեփյան, Կառլ Լոմբե, Աղվան Մկրտչյան, Կարեն Ալեքսանյան, Լեւոն Փաչաջյան, Ժորա Հովհաննիսյան (Գալոաս Պետրոսյան, 87), Էդգար Մանուչարյան (Հովհաննես Անտոնյան, 90):

Գոլերը՝ Մանուչարյան (15,41), Հովհաննիսյան (26), Գեշոսկի (80):

Զգուշացվեցին Արթուր Մկրտչյանը (45), Դե Հեսուս Դա Սիլվան (65), Ջոկիչը (72), Կաֆինկովսկին (73), Կրստեակին (77), Փաչաջյանը (88): 42-րդ րոպեին երկրորդ դեղին քարտը ստանալով, դաշտից հեռացվեց Ալեքսանյանը:

Սանտինիի հետնորդը Ռայմոն Դոմենեկն է

Ֆրանսիայի ֆուտբոլի ֆեդերացիայի նիստում փակ գաղտնի քվեարկությամբ երկրի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ է նշանակվել Ռայմոն Դոմենեկը: 52-ամյա մարզիչը կփոխարինի Ժակ Սանտինիին, որը Եվրոպայի առաջնության ավարտից հետո ստանձնել է անգլիական «Տոտենհեմի» ղեկը: Նշենք, որ Սանտինիի հեռանալուց հետո գլխավոր մարզչի պաշտոնի գլխավոր թեկնածուներ էին համարվում Ժան Տիգանան եւ Լորան Բլանը: Ընդ որում, Տիգանայի թեկնածությունը պաշտպանում էր Միշել Պլատինին: Սակայն նախապատվությունը տրվեց Ֆրանսիայի երիտասարդական հավաքականի գլխավոր մարզիչ Ռայմոն Դոմենեկին, որը վերջին 11 տարիներին հաջողությամբ է աշխատում երիտասարդների հետ: Նրա գլխավորությամբ երիտասարդական հավաքականը 1994 եւ 1996 թթ. Եվրոպայի առաջնություններում հասել է մինչեւ կիսաեզրափակիչ, իսկ 2002 թ.՝ եզրափակիչ, իսկ 1996 թ. օլիմպիադայում՝ քառորդ եզրափակիչ: Նա առաջինն էր, որ երիտասարդական հավաքականի կազմում ընդգրկեց ներկայիս «աստղերին»՝ Զիդանին, Դյուգարիին, Անրիին, Տրեզեգեին, Սահային եւ Պեդրետուն: Ամենայն հավանականությամբ նոր մարզիչը զգալիորեն կերիտասարդացնի ազգային հավաքականի կազմը՝ լավ ճանաչելով երիտասարդ ֆուտբոլիստներին:

Որպես ֆուտբոլիստ նա ժամանակին հանդես է եկել «Լիոնում», «Ստրասբուրգում», ՊՍԺ-ում եւ «Բորդոյում»: Դոմենեկը 8 անգամ հանդես է եկել ազգային հավաքականում, մարզչական գործունեություն է ծավալել «Մյուլուզ» եւ «Լիոն» թիմերում:

Ոչ-ոքին ձեռնտու էր մրցակիցներին

Ֆուտբոլի Ամերիկայի գավաթի խաղարկությունում ավարտվեց «Ա» խմբի նախնական մրցաշարը: Առաջատարների՝ Կոլումբիայի եւ Պերուի հավաքականների մրցախաղն ավարտվեց ոչ-ոքի (2-2), որը ձեռնտու էր մրցակիցներին: Երկու թիմերն էլ պայքարը կշարունակեն քառորդ եզրափակիչում: Ոչ-ոքի ավարտվեց նաեւ Բոլիվիա-Վենեսուելա հանդիպումը (1-1): Բացի նշված հավաքականներից, հաջորդ փուլի ուղեգիր է նվաճել նաեւ Բրազիլիայի ընտրանին:

Օտարերկրացի մարզիչներն իրենց չարդարացրին

Գրեթե միաժամանակ Ռուսաստանի պրեմիեր-լիգայի երկու թիմերում աշխատող օտարերկրացի մարզիչները հեռացվեցին իրենց պաշտոնից: «Դինամոյի» ղեկավարությունը խզել է չեխ մարզիչ Յարոսլավ Գժեբիկի հետ պայմանագիրը: Թիմը մինչեւ առաջնության ավարտը կգլխավորի Վիկտոր Բոնդարենկոն, որը մինչ այդ օգնում էր Գժեբիկին:

Սպասելիները չարդարացրեց նաեւ պորտուգալացի մասնագետ Արթուր Ժորժին: Նա գլխավորությամբ երկրի չեմպիոն ԲԿՄԱ-ն ընթանում է 5-րդ տեղում: Բանակայինները 6 միավորով զիջում են առաջատարին՝ «Տորպեդոյին»: Ակումբի բաժնետերերի խորհրդի որոշմամբ Արթուր Ժորժին էլ հեռացվեց իր պաշտոնից: Թիմը կրկին կգլխավորի Վալերի Գազաեւը, որի ղեկավարությամբ ԲԿՄԱ-ն անցյալ տարի նվաճել էր ՌԴ չեմպիոնի տիտղոսը: Անցյալ տարի Գազաեւի գլխավորությամբ թիմն առաջին իսկ փուլից դուրս մնաց մրցաշարից՝ զիջելով «Վառդարին»: Ակումբի ղեկավարությունը Գազաեւի փոխարեն հրավիրելով Արթուր Ժորժիին, հույս ուներ, որ նա կօգնի հաջողության հասնելու եվրագավաթների մրցաշարում:

Պերեսը կրկին «Ռեալի» նախագահ

Առաջիկա չորս տարիներին եւս Մադրիդի «Ռեալը» կգլխավորի Ֆլորենտինո Պերեսը, որը վերընտրվել է ակումբի նախագահի պաշտոնում: Նախագահական ընտրություններում Պերեսը հաղթել է ձայների բացարձակ առավելությամբ: Նրա օգտին ձայն են տվել ընտրողների 91,35 տոկոսը: «Ռեալի» նախկին նախագահ Լորենցո Սանսը ստացել է ձայների ընդամենը 5,08 տոկոսը: Նախագահի պաշտոնի 3-րդ թեկնածու Արթուր Բալդասանոն հավաքել է ձայների 1,96 տոկոսը:

Վերընտրվելուց հետո Պերեսը հայտարարել է. «Այսօր ընտրություններում հաղթեց Մադրիդի «Ռեալը»: Ես գիտեմ, թե առաջիկայում ինձ ինչ է սպասվում, ուստի իմ վրա եմ վերցնում ակումբի պատասխանատվությունը»:

Յարցեւը մնում է իր պաշտոնում

Թեեւ Ռուսաստանի ֆուտբոլային միության գործկոմն անբավարար գնահատեց երկրի հավաքականի ելույթը Եվրո-2004-ում, սակայն ընտրանու գլխավոր մարզիչ Գեորգի Յարցեւը մնում է իր պաշտոնում: Նրան հանձնարարված է հավաքականը նախապատրաստել 2006 թ. աշխարհի առաջնությանը: Այսպիսով, ռուսական ֆուտբոլի պատմության մեջ առաջին անգամ, չնայած խոշոր մրցաշարում կրած անհաջողությանը, հավաքականի գլխավոր մարզիչը պաշտոնանկ չարվեց:

Գործկոմի նիստից հետո կայացած մամուլի ասուլիսում անսպասելի միջադեպ տեղի ունեցավ: «Կեցցե ազգային բոլշեւիկյան կուսակցությունը, Ռուսաստանն առանց Պուտինի, ՌԴ ֆուտբոլային միությունն առանց Կոլոսկովի» բացականչություններով բեմ բարձրացավ անհայտ մի անձնավորություն եւ նարնջի հյութով լի բաժակը դատարկեց Կոլոսկովի ու Յարցեւի վրա:

ՍՊՈՐՏ

Չեմպիոնը Կասիմջանովն է

Ուզբեկ գրոսմայստեր Ռուսամ Կասիմջանովը նվաճեց ՖԻԴԵ-ի վարկածով շախմատի աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Նա մրցամարտը շահեց անգլիացի գրոսմայստեր Մայքլ Ադամսից: Վերջին տուրից առաջ հաշիվը հավասար էր՝ 2,5-2,5: 6-րդ պարտիայում Կասիմջանովը խաղում էր սպիտակ խաղաքարերով, սակայն չկարողացավ վճռել մրցամարտի ելքը: Պարտիան ավարտվեց ոչ-ոքի: Այսպիսով, 6 պարտիայից բաղկացած մրցախաղը չորոշեց աշխարհի չեմպիոնին (3-3): Մրցակարգի համաձայն, նշանակվեց լրացուցիչ 2 պարտիա արագ շախմատի կանոններով: Առաջինում Կասիմջանովը հաղթանակ տոնեց, իսկ երկրորդն ավարտեց ոչ-ոքի: Այսպիսով, մրցախաղը շահելով 4,5-3,5 հաշվով, Կասիմջանովն առաջին անգամ նվաճեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը:

Այժմ նա աշխարհի բացարձակ չեմպիոնի տիտղոսի համար պետք է մրցի Գարի Կասպարովի հետ:

Շումախերի 80-րդ հաղթանակը

«Ֆորմուլա-1» դասի ավտոարշավորդ Միխայիլ Շումախերն աշխարհի առաջնություններում իր 80-րդ մրցաշարը շահեց: Նա դարձավ Մեծ Բրիտանիայի Գրան պրիի խաղարկության հաղթող: Թեեւ նախնական մրցումներում «Ֆերարիի» առաջատարն ընդամենը 4-րդ արդյունքն էր ցույց տվել՝ առաջ թողնելով Կիմի Ռայկոնենին, Ռուբենս Բարիկելոյին եւ Ջենսոն Բատոնին, սակայն եզրափակիչ փուլում նա առաջինը հատեց վերջնագիծը: Այս հաղթանակի շնորհիվ Շումախերն ընթացիկ առաջնությունում միավորների քանակը հասցրեց 100-ի: 2-րդ տեղում ընդհանուր հաշվարկով ընթանում է Բարիկելոն (74 միավոր): Լավագույն եռյակը եզրափակում է Բատոնը (53): «Կոնստրուկտորների գավաթի» խաղարկությունում առջեւից է ընթանում «Ֆերարին» (174 միավոր):

«Դինամոն» Ուկրաինայի սուպերգավաթակիր

Օդեսայում Ուկրաինայի Սուպերգավաթը վիճարկեցին երկրի չեմպիոն Կիեւի «Դինամոն» եւ գավաթակիր Դոնեցկի «Շախտյորը»: Հաշիվը 21-րդ րոպեին բացեց դինամոյական Գուսեւը, սակայն 76-րդ րոպեին Լեւանդովսկին վերականգնեց հավասարակշռությունը: Հաղթողը որոշվեց 11 մ հարվածաշարով: Ավելի դիպուկ գտնվեցին դինամոյականները, որոնք հաղթեցին 6-5 հաշվով: Ընդ որում, երկու թիմերում էլ աչի ընկան դարպասապահները: Հետաքրքրական է, որ առաջին չորս հարվածները հետ մղվեցին դարպասապահներ Շովկովսկու ու Լաշտուվկայի կողմից եւ միայն Շացկիխի հարվածից հետո «Դինամոն» բացեց 11 մ հարվածաշարի հաշիվը: Հաղթողին որոշելու համար ընդհանուր առմամբ կատարվեց 20 հարված, որից իրացվեց ընդամենը 11-ը: Հանդիպման հերոսը «Դինամոյի» դարպասապահ Շովկովսկին էր, որը կրկնեց պորտուգալացի Ռիկարդոյի սխրանքը: Շովկովսկին 2 անգամ հետ մղեց 11 մ հարվածը, իսկ վերջին՝ 20-րդ հարվածն ինքը կատարեց եւ հաղթանակ պարգեւեց իր թիմին:

Կավենագին հանդես կգա «Սպարտակում»

Արգենտինացի շնորհալի երիտասարդ ֆուտբոլիստ Ֆեռնանդո Կավենագին հնգամյա պայմանագիր է կնքել Մոսկվայի «Սպարտակի» հետ: «Ռիվեր փլեյթի» հարձակվողը տարեկան կստանա 1,5 մլն դոլար: Մինչ այդ ֆուտբոլիստով հետաքրքրվում էր Մոսկվայի ԲԿՄԱ-ն, որի ներկայացուցիչները բավական ժամանակ բանակցում էին արգենտինական կողմի հետ: Սակայն ԲԿՄԱ-ն այդպես էլ չկարողացավ «Ռիվեր փլեյթին» ներկայացնել երաշխիքներ, որ վճարունակ է: Իսկ ահա «Սպարտակի» եւ «Ռիվեր փլեյթի» ներկայացուցիչների մոտ 3 ժամ տեւած բանակցությունները դրական արդյունք են տվել: Կողմերը համաձայնել են Կավենագիի տրանսֆերային գնի շուրջ: Այն կազմում է 12 մլն դոլար: Մնում է, որ «Սպարտակն» իր վճարունակության վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր ներկայացնի:

Խորվաթներին կմարզի Կրանչարը

Ֆուտբոլի Խորվաթիայի հավաքականի գլխավոր մարզիչ է նշանակվել Զլատկո Կրանչարը՝ Զագրեբի «Դինամոյի» կիսապաշտպան, խորվաթական ֆուտբոլի ծագող «աստղ» Նիկո Կրանչարի հայրը: Կրանչարին կօգնի երկրի երիտասարդական հավաքականի նախկին մարզիչ Մարտին Նովոսելացը: Կրանչարը մինչեւ 2006 թ. աշխարհի առաջնության ավարտը պայմանագիր է կնքել ֆեդերացիայի հետ:

Մարզչական իր առաջին հաջողությանը Կրանչարը հասել է 2001/02 թթ. մրցաշրջանում՝ «Զագրեբին» հասցնելով չեմպիոնական բարձունքի: Այնուհետեւ նա նույնպիսի հաջողության է հասցրել նաեւ Զագրեբի «Դինամոյին»: Որպես ֆուտբոլիստ Կրանչարը հայտնի է 80-ական թթ. Հարավսլավիայի հավաքականում իր ելույթներով: Նա հանդես է եկել Զագրեբի «Դինամոյում», ավստրիական «Աուստրիայում» ու «Ռաֆիդում»: Հետաքրքրական է, որ «Ռաֆիդում» նա սկսել է իր մարզչական գործունեությունը որպես Օսսի Բարիչի օգնական:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՀԱՄԱՌՈՏ

Իրանում ավտովթարը խլել է 24 մարդու կյանք

Առնվազն 24 մարդ է մահացել, ավելի քան 10-ը ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ Իրանի Հարավային Պարս նահանգում տեղի ունեցած ավտովթարից: Իրանական աղբյուրները գրում են, որ մարդատար ավտոբուսը բախվել է բեռնատար մեքենայի:

Սպանվել է Մոսուլի նահանգապետը

Երեկ երեկոյան, ըստ Ռոյթեր գործակալության, Իրաքում գրոհայինները սպանել են Մոսուլի նահանգապետին: Ամերիկացիների կողմից Իրաքում իշխանությունը տեղացիներին փոխանցելուց հետո (հունիսի 28) սա ամենաբարձրաստիճան պաշտոնյայի սպանությունն է: Ի դեպ, երեկ նոր կառավարության ձեւավորումից հետո Իրաքում տեղի է ունեցել ամենամեծ ահաբեկչությունը (կարդալ էջ 5):

Պուտինի եւ Սաակաշվիլու հանդիպումը ծրագրված է աշնանը

ՄՈՍԿՎԱ, 14 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ռուսաստանի եւ Վրաստանի նախագահների հանդիպումը ծրագրված է աշնանը, հայտնել է Վրաստանի ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Գելա Բեժուաշվիլին: «Մեր նախագահներն իրենց հանդիպումներով տոն են տալիս մեր երկրների հարաբերություններին: Հերթական հանդիպումը կկայանա այս տարվա աշնանը», Մոսկվայում ՌԴ անվտանգության խորհրդի քարտուղար Իգոր Իվանովի հետ հանդիպման ընթացքում ասել է Բեժուաշվիլին:

Միացյալ Նահանգները չի հեռաձգի նախագահական ընտրությունները

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 14 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ԱՄՆ-ը չեղյալ չի հայտարարի եւ չի հետաձգի նոյեմբերին նախատեսված նախագահական ընտրությունները ահաբեկչական հարձակման կամ աղետի դեպքում: Այս մասին երեքշաբթի հայտարարել են ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչները, հաղորդում է «Ռոյթեր» գործակալությունը: Առանձին նահանգներ կարող են փոխել ընտրությունների ժամանակացույցը, բայց երկրի իրադրության վրա դա չի ազդի, հայտարարել է հանձնաժողովի նախագահ Դեֆորեստ Սոարիսը: «Ես չեմ կարող ներկայացնել հանգամանքներ, որոնց դեպքում նախագահական ընտրությունները կարող են հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել», ասել է Սոարիսը հանձնաժողովի նիստից հետո:

ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը որոշեց փոփոխել կնքվող ռեպո-համաձայնագրերի տոկոսադրույքը՝ տարեկան 6 տոկոսից իջեցնելով 1 տոկոսային կետով եւ սահմանելով այն տարեկան 5 տոկոս: Կենտրոնական բանկի գործառնությունների մյուս տոկոսադրույքները մնացին անփոփոխ. տրամադրվող լոմբարդային վարկերի տոկոսադրույքը՝ տարեկան 20 տոկոս, իսկ ներգրավվող ավանդների տոկոսադրույքը՝ տարեկան 1 տոկոս:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

ՀՀ Կենտրոնական բանկը 15.07.2004թ. ժ.9.00 ից սահմանում է արտարժույթի հետեւյալ հաշվարկային փոխարժեքները ու գնման եւ վաճառքի հետեւյալ գները.

ISO ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Հաշվարկային փոխարժեք	Գնում	Վաճառք
USD	1	ԱՄՆ դոլար	527.99	522.70	533.30
EUR	1	ԵՎՐՈ	653.70	649.80	657.60
RUR	1	Ռուս. ռուբլի	18.14	17.10	19.20

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է «Կամագո» ՍՊԸ-ի կնիքը: Խնդրում եմ այն համարել անվավեր:

«Կամագո» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Ղամբարձումյան

FOR YOUR INTERNAL NEWS OF ARMENIA LOG ON TO www.azg.am, IN ARMENIAN, RUSSIAN, ENGLISH AND TURKISH

Հայաստանի ամերիկյան համալսարանը

մրցութային կարգով աշխատանքի է հրավիրում

- Ծրագրային աջակցման ինժեների

Թեկնածուները պետք է ունենան բարձրագույն մասնագիտական/տեխնիկական կրթություն, առնվազն երկու տարվա համապատասխան աշխատանքային փորձ եւ անգլերեն լեզվի լավ իմացություն:

Պահանջվող փաստաթղթերն են՝ կրթության վկայական եւ ինքնակենսագրական (resume): Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ ս. թ. հուլիսի 21-ը, ժամը 17:45-ը:

Դիմել ՀԱՀ-ի կադրերի բաժին հետեւյալ հասցեով՝ Մարշալ Բաղրամյան պող. 40, 50 սենյակ:

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն ընդունում է ավանդներ հետեւյալ պայմաններով.

CONVERSE BANK

ՀՀ դրամով ավանդների սակագներ տոկոսագումարի ամսեկան վճարումով				
	Ավանդի ժամկետ (ամիսներ)			
Գումար (հազ. դրամ)	1	3	6	12
100-25000	5.0%	5.5%	6.5%	7.5%
25001-50000	5.0%	6.0%	7.0%	7.5%
50 000 եւ ավել	պայմանագր.	պայմանագր.	պայմանագր.	պայմանագր.

ՀՀ դրամով ավանդների սակագներ տոկոսագումարի վճարումով ժամկետի վերջում				
	Ավանդի ժամկետ (ամիսներ)			
Գումար (հազ. դրամ)	1	3	6	12
100-25000	5.0%	6.0%	7.0%	8.0%
25001-50000	5.0%	6.5%	7.5%	8.0%
50 001 եւ ավելի	պայմանագր.	պայմանագր.	պայմանագր.	պայմանագր.

ԱՄՆ դոլարով ավանդների սակագներ տոկոսագումարի ամսեկան վճարումով				
	Ավանդի ժամկետ (ամիսներ)			
(հազ. ԱՄՆ դոլար)	1	3	6	12
200-10 000	4.0%	4.5%	5.5%	6.5%
10 001-50 000	4.0%	5.0%	6.0%	6.5%
50 001 եւ ավել	պայմանագր.	պայմանագր.	պայմանագր.	պայմանագր.

ԱՄՆ դոլարով ավանդների սակագներ տոկոսագումարի վճարումով ժամկետի վերջում				
	Ավանդի ժամկետ (ամիսներ)			
(հազ. ԱՄՆ դոլար)	1	3	6	12
200-10 000	4.0%	5.0%	6.0%	7.0%
10 001-50 000	4.0%	5.5%	6.5%	7.0%
50 000 եւ ավել	պայմանագր.	պայմանագր.	պայմանագր.	պայմանագր.

ԳՈՒՄԱՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՎԱՆԴՆԵՐ

Ավանդի դիմաց վճարվող տոկոսները կազմում են տարեկան 6,5% :
Տոկոսների վճարումը կատարվում է միայն ժամկետի վերջում:
Ավանդները ընդունվում են ԱՄՆ դոլարով եւ Եվրոյով:
Ավանդի նվազագույն գումարը կազմում է 200 USD/EUR:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՈՒՆՈՎ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ

Ավանդի դիմաց հաշվարկվող տոկոսը կազմում է տարեկան 6%:
Ավանդները ընդունվում են ԱՄՆ դոլարով եւ Եվրոյով:
Ավանդի նվազագույն գումարը՝ 200 USD/EUR:

UNIBANK

до 31 августа

ВКЛАД ОЛИМПИЙСКИЙ

12 месяцев

от 1000 USD

ежемесячная капитализация или выплата процентов

% ГОДОВЫХ

СТАНДАРТНЫЕ ВКЛАДЫ В ДРАМАХ И ВАЛЮТЕ

Срок вклада	Выплата процентов	AMD	USD, EURO
		До 5 млн.	До 10.000
до востребования		0*	0*
31 – 90 дней	в конце срока	7,5	5,5
	ежемесячно	7	5
91 – 182 дня	в конце срока	8	6,5
	ежемесячно	7,5	6
183 – 364 дня	в конце срока	8,5	7,5
	ежемесячно	8	7
365 – 550 дня	в конце срока	9	8
	ежемесячно	8,5	7,5

Вклады превышающие 5 млн. AMD или 10 тыс. USD, EURO и/или сроком более 550 дней - по индивидуальным ставкам.
* в отдельных случаях процентная ставка определяется на договорной основе

Минимальная сумма срочных депозитов
- 50.000 AMD
- 100 USD, EURO

ЮНИБАНК РЕАЛЬНЫЕ ИНВЕСТИЦИИ 53 98 70 www.unibank.am

АДРЕСА ФИЛИАЛОВ ЗАО "ЮНИБАНК"

Центральный офис

г. Ереван, ул. Амиряна 12
тел. (3741) 539870
e-mail: unibank@unibank.am

Филиалы в г. Ереване:

Филиал "КЕНТРОН"
ул. Абовяна 26
тел. (3741) 542431

Филиал "МАЛАТИЯ"
ул. Себастия 141
тел. (3741) 776627

Филиал "КОМИТАС"
ул. Комитаса 15/2
тел. (3741) 261838

Филиалы в Армении:

Филиал "ВАНАДЗОР"
г. Ванадзор, ул. Тигран Мец 53
тел. (37451) 40872

Филиал "ГЮМРИ"
г. Гюмри, ул. Ахтанаки 1
тел. (37441) 33055

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային տնտեսության կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N-217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է «Երեւան» ՏՕԿ Շենգավիթ համայնքի ոռոգման նպատակով մակերեւութային ջրային տնտեսությունից 67 լ/վրկ ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային տնտեսության կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2004 թ. հուլիսի 26-ին, ժամը 16.00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

տեղեկագրքով, Ինտերնետով, CD-ով, հեռախոսով

ՍՓՅՈՒՌ տեղեկատվական ծառայություն

Երեւան, Փավստոս Բուզանդի 1/3, 7-րդ հարկ
Հեռ. 590000 www.spyur.am

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ՝ 65, դասիչ՝ 69150 Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 14.07.2004 Գինը՝ 100 դրամ